Hon. Rédaction
de la Revue arménienne HANTESS
au Couvent des R.R. P.P. Méchitharistes
à VIENNE
VII Mechitharistingasse 4

ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՏԱՄՈՒԼ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

Ա[illegible]ՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ՏԱՐՒՈՅ

1894

ԹԻՒ 14 ՕԳՈՍՏՈՍ 1

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՉՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

	Երես	
Նայեան Պատրիարքի կեանքին	425	Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ
Արծիւներուն Բոյնը	432	Յ. Ե. ԳԱՊԱՏԱՅԵԱՆ
Իմ Մանկական Յիշատակներես	435	Մ. ՆՈՒՊԱՐԵԱՆ
Միսի Վրայ Կարեւոր Գիտելիք	438	ՏՕՔԹ. ՓԱՇԱԵԱՆ
Պաշիկը	441	Յ. ԱԼՓԻԱՐ
Դպրոցական Առողջապահութիւն	443	ՄՈՏԱ
Բարոյական եւ Դպրոց	446	* *
Մեր Գառնառական Ժողովը	449	Վ.
Լրաբեր	452	ԽՄԲ.
Միամեայ Տեղեկագիր Հոգ.-Որբախնամ Ընկերութեան	454	Տ. ԽՈՐՇՈՒՐԴ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Իրմիրի համար տարեկան գին. մէճ. 3 ½

» » վեցամսեայ 2

Ֆ. Պօլսոյ և այլ երկիրներու համար տարեկ. 4

կամ 17 Ֆրանք. վեցամսեայ 2 ½

Աղդ. վարժապետներու համար Ժողովը տարեկ. 2 ½

դպրեվրու համար » 3

ԿԱՆԽԻԿ ԼԵԶՒԻ

Ա. Մասնաւ կ'հրատարակէ նաև ծանուցումներ չափաւոր պայմաններով։

Ո և է նամակ, յօդուած ու գրուած ուղղեալ առ խմբագրութիւն ետ չեն դարձուիր։

Այն բաժանորդներն որ կ'փափաքին ընդունիլ իրենց թերթերն կարող են դիմել առ խմբագրութիւնս իրենց հասցէն որոշակի նշանակելով և միանգամայն տարեդլխին՝ Օսմանեան Թղթադրոշմ ուղարկելով։

Մեր հասցէն,

Խմբագրութիւն ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼՈՑ — Իզմիր

Rédaction d'ARÉVÉLIAN MAMOUL —Smyrne.

ԱՆԿԼՕ–ԻՍԹԸՐՆ

ՓՕ–ՕՐԼՐԱԹԻՖ ՓՕՄՐԱՆԻ, ԼԻՄԻԹԸՑ

Ֆրանկոյ Նոտ

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Դիմեցէք մեր ընդարձակ վաճառատունը ինչ բանէ որ պէտք ունենաք, հագուստեղէնէ ինչպէս ուտեստեղէնէ, կամ կարասիէ ինչպէս հօտեղէնէ, պատրաստ հագուստներէ ինչպէս խոհանոցի վերաբերեալ ամէն տեսակ պիտոյքներէ, զանազան բրդեղէնէ և մեսաքսեղէնէ ինչպէս զարդարանքի առարկաներէ, վերջապէս ԱՄԵՆ ԻՆՉԷ որ ձեր մտքէն ու երեւակայութենէն կրնայ անցնիլ։

կրնակի ԱԺԱՆՈՒԹԻՒՆ պիտի գտնէք, որովհետեւ մեր ապրանոց տոկունութիւնը ինչպէս նաեւ գներու անհամեմատ աժնուԹիւնը հանրածանօթ են։

ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

L'UNION

(L'UNION)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ՀԻՄՆԵԱԼ 1828 ԻՆ

Ընկերական Դրամագլուխ և Պահեստի Ֆր. 82,000,000

ԻՒՆԻՕՆ ապահովագրական ընկերութիւնս նկատելով որ Անգլ. ընկերութիւնները իրենց արդի սահմանին 30ին 50 0/0 զեղչ մը կ'ընեն, պատիւ ունի ծանուցանելու իւր բազմաթիւ յաճախորդներուն և արդյ հասարակութեան թէ պատրաստ է ընդհակ յատկութեան 20 0/0 զեղչ մը այն գումարին վրայ զոր Անգլ. ընկերութիւնները կ'ստանան իրենց սովորական 30 0/0 զեղչը ընելէ յետոյ։

ԺԱՆ Բ. ՊՕՍԿՕՎԻՉ
JEAN P. BOSCOWICH

Ընդհանուր Գործակալ Զմիւռնիոյ

ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԵ

Շատ բարեւ Աղն. Տիկիններու եւ Նազելի Օրիորդներու

Եթէ կուզէք ձեր վարսուկ մատներու տակ, գեղեցիկ, ձեւաւոր, կոկիկ եւ աղուոր վերջին նորաձեւութեանց համաձայն ԹՈՐՇՈՆի գործիք մ'ունենալ, որ ձեր պարապոյ ժամերուն փոքր ջղեցերով, դոյնզդոյն գնդասեղներով, ծովագոյն կամ վարդագոյն թղթի վրայ, Ռէթըր Ըէթըր ներդաշնակութեամբ, ձեր մատներու նրբին ճարտարութիւնն ցոյց տալ, պարտիք հատ մը առնել իմ չինած ԹՈՐՇՈՆի բարձերէն, զորս վերջին կատարելութեան հասուցած եմ, որու ապացոյցն է՝ ֆրանկաց թագը նշանաւոր վաճառատանց մէջ իմ չինածներուս ի վաճառ դրուիլն, եւ որու նմանը Իպէրի մէջ ոչ ոք կարող է չինել։

Ասկէց զատ՝

Մտադիր եմ 1900ի Բարիզի մէջ բացուելիք միեզերական ցուցահանդեսին հատ մը դրկել ի գնահատութիւն։

Փութացէք ուրեմն ադնիւ Տիրուհիք, իմ չինած թորշոնի բարձերէն մէյմէկ հատ գնելու, որու շահումէ՝ ձեր շնորհիւ՝ միայն ունիմ տուն մը չինել տալ։

ՄԷԿ ԹՈՐՇՈՆԻ բարձ, 38 հատ ՖԻԶՕ 30 ֆր. եւ ՀԱԽԱՐԱԿ, 40 ԳՆԴԱՍԵՂ, և ԹՈՒՂԹ ՄԻԱՅՆ 1 Ապր. մէջմիւս Միայն ԹՈՐՇՈՆի բարձը 20 դրչ. անցուկ։

Կեդրոնատեղի Հայոց Թաղ

ԱՆԴՐԱՆԻԿ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱՏՈՒՆ

ԳԱՐԼՕ ՊՈՒՌՄԻՃՃԵԱՆ

Ֆրանկաց Թաղ, Կէօլհաղլեօղ 7,

Սոյն գործատան մէջ մեծ խնամքով և դեղարուեստական յաջողութեամբ կը շինուին ամէն տեսակ պատկերներ ալ և ալ մեծութեամբ, պատկերաց վերարտադրութիւնք և մեծացնուած կը ծախուին ամէն տեսակ լուսանկարչութեան վերաբերեալ մեքենաներ և ալ գործիքներ վերջին դրութեամբ կատարելագործուած։

Փափաքողաց մասնաւոր ուշադրութեան։

ԴԻՒՐԱՄԱՏԶԵԼԻ ԳԻՆԵՐ

Պատիւ ունիմ ծանուցանել քաղաքիս Պատ. Հասարակութեան թէ՝ պատրաստ եմ ցրուիչի և հաւաքիչի պաշտօն կատարել, այսինքն շրջել տրաւիրագիր, մեհնագիր, վիճակահանութեան տոմսեր և այլն և այլն և նոյներուն արժէքը հաւաքել։ Նմանապէս կարող եմ ինձ յարմար զանազան պաշտօն վարել վաճառատուներու մէջ։ Պատ. Հասարակութիւնը կարող է երաշխաւորել իմ գործոյն ընդհութիւնս և հաւատարմութիւնս տեղւոյս Հայ Ընթերցատան Պատ. Վարիչներէն։ Փափաքողք հաճին դիմել ցերեկը Պարմաք - Գարու Պաքճիեանց վաճառատան դիմացը կամ երեկոյին և գիշերը Հայ Ընթերցատուն՝ ուր տարիէ մ'ի վեր գործակատարութեան պաշտօն կը վարեմ։

ՊԵՏՐՈՍ ՔԻՇՄԻՇԵԱՆ

Ս. ՍԻՎՐԻՍԱՐԵԱՆ ԻՒ ԸՆԿԷՐ

ՄԵԾ ՁԱՆԱՁՆԱԾՈՒԹԻՒՆ

Սոյն համբաւաւոր վաճառատունն՝ ուր կը ծախուին դանազան բամպակեղէն, բրդեղէն, մետաքսեղէն նիւթեր, վաղուց կը վայելէ ոչ միայն Իզմիրի ամէն հասարակութեանց համարումն, այլ և իր բոլոր գաւառային յաճախորդներուն վստահութիւնը որ արդէն քալ գնահատած են իր ապրանաց ընտրութեան, տոկունութեան, լաւութեան, չափերու ճշտութեան և գիներու անհամեմատ չափաւորութեան գգալի առաւելութիւններն, այնպէս որ միշտ գոհ մնացած և սոյն վաճառատունը պատուած են իրենց յանձնարարութեամբ։ Ինչպէս յարգ նոյնպէս և այսուհետև Սիվրիսարեան վաճառատունն պատրաստ է մինչեւյն դիւրութիւններն ընծայել տեղւոյս յաճախորդներուն, և յատկապէս գաւառացոց ուշադրութիւնը կը հրաւիրէ վերոյիշեալ առաւելութեանց վրայ։ Պարտին վստահ լինիլ թէ իրենց յանձնարարութիւններն գրավ կամ գործակատարներու միջնորդութեամբ, ամենայն ճշտութեամբ ու փութով պիտի կատարուին։ Անտարակոյս գաւառացի և տեղացի նոր յաճախորդներ պիտի փութան, անձամբ դիմելով գործել, ապրանաց գերազանցութիւն, Սիվրիսարեան ընգարձակ մթերանոցներու մէջ՝ որ կը գտնուի՝

Ս.ՅԻ – Եւրոյի կողմանէ փողոցն տեղ վերէ երկու ոսկի։

LIBRAIRIE FRANÇAISE & ANGLAISE

Կը-ըլլէ, Օ Գան-Մուրէյէ գիմացէ փողոց

Պատիւ ունիմ ծանուցանել քաղաքիս Հայ ընթերցասէրներուն թէ վարձու գրքերու ճոխ գարան մ՝ունիմ, ուր շաբաթական կը յաւելում նոր հրատարակ եղեալ Ֆրանսերէն և Անգլիերէն գործերը։ Պայմանաւքի վրայ կրնամ ամէն տեսակ գիրք ու թերթ բերել տալ գիւրահաշիւ պայմաններով։

Կրնամ վստահութեամբ ըսել թէ գիներս ամեն մրցում կ՝արհամարհեն։

ԿԱՏՈՒՆ

ԼԱ ՓՐԱՆՔՓՕՐԹՈՒԱԶ

(LA FRANCFORTOISE)

ԾՈՎԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՓՐԱՆԿՖՕՐԹ

Դրամագլուխ ֆր. 6,250,000 Պահեստի դրամ 1,270,312 ֆր.

Ընկերութիւնս կ՚ապահովագրէ չոգենաւով ուղարկելի ամեն տպրանք, ինչպէս և դրամածրար, ևայլն դիւրամատչելի պայմաններով։

Գնոց և այլ ամեն տեղեկութեանց համար կը հրաւիրուին դիմել առ ընդհանուր դործակալն Զմիւռնիոյ և շրջակայից

ՅԱԿՈԲ Դ· ՎԷՄԵԱՆ

Պատիւ ունիմ ծանուցանել Արդյ հասարակութեան թէ՝ ամիչկան կերպով կը դարմանեմ ակռայի ամենէ անտանելի ցաւերը։ Ակռաներու փտած մասերը կը լեցնեմ փտութիւնը ինչ վիճակի մէջ որ ալ ըլլայ, ջղերուն անդգայութիւն տալու համար մի քանի անգամ միայն դարմանելով։ Լուսած ակռան ապագային ոչ պիտի ցաւի, ո՛չ պիտի մաշի և ո՛չ պիտի ֆոսիի։

Այն անձինք որ քանիցս կեղծ ակռաներ շինել տուած են և միշտ դժգոհ մնացած, թող հաճին անգամ մը ինձ դիմել և ես պատրաստ եմ մինչև իսկ ՄԱՇԱՑ ու անզօր լինաերու վրայ զետեղել ակռաներու մարդղջ շարերը և կամ անջատ ակռաներ, առանց դիմելու թելերու յուղնուցիչ գործածութեան։

Նոր դրութեամբ կը հաստատեմ ակռաներու ամբողջ շարեր անգլիական քառչուքի վրայ։ Ասոր դրութեամբ քիմքին իր ՁԱՇԱԿը և լեզուն իր ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՎՆ ու ՆՐԲՈՒԹԻՒՆԸ ՄԻՇՏ կը պահէն։

Փտած ակռաներու արմատներն անվնաս կերպով և առանց ցաւ պատճառելու կը հանեմ։

Փափաքողք կրնան դիմել Պաամախանէ փողոց, թիւ 120, 8-12 ի· Ա· և 1-7 ի· Ե·

ՏԻԳՐԱՆ ՏԻՐԱՑՈՒԵԱՆ

Վ· ՍԻՏԻ — V. SIDI

Մեծ կազմատուն Բարիզեան և Անգլիական ճաշակով։

Աւելնաընտիր կազմ, Նուագատետրներու և Տումարներու

ԹԻՍՏ ԶԱՓԱՒՈՐ ԴԻՆԵՐ

17, Պաշպարէսէ խան, Ֆրանկոյ ընդ



ԿԻՍԱՄՍԵԱՅ

ՔՂ. ՏՓՐՔ

ԹԻ 14 1 ՕԳՈՍՏՈՍ 1894

ՆԱԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿԵԱՆՔԷՆ

Մեծահամբաւ Նալեալ Յակոբ Պատրիարքի համառօտ կենսագրութիւնը անցեալ տարի Արեւելք լրագրոյն մէջ հրատարակելէ վերջ, հետաքրքիր եմ Նորին Սրբաշնորհութեան ձեռնադիրները տեսնել։

Վերջին անգամ յերուսաղէմ երթալուս, մեր աղնիւ բարեկամ՝ Թորոսեան Յարութիւն էֆէնտիէն իմացայ թէ երուսաղէմ պատուհասմամբ Հանէ կամ Յովհաննէս եպիսկոպոսին մօտիկ ազգականներէն Ներսէնաղարդ մահտեսի Աբրահամ պատկերահանին քով կը գտնուին երկու անտիպ նամակներ, մին՝ Շղթայակիր Գրիգոր պատրիարքին, և միւսը՝ Նալեան Յակոբ պատրիարքին։

Ա. Երեքդ է ըսել՝ որ յաջողեցանք տեսնել զանոնք, շնորհիւ խարբերդցի երիտասէր Պատուաժատուր եպիսկոպոս Տ. Յովհաննէսեանցի, և առնուլ անոնց պատճէնները։

Եւ այս առթիւ խնդրեցինք Նորին Գերապատուութենէն, որ յաջողցնէ նաեւ այդ իսկագիրներն՝ Ս. Երուսաղիմայ Մատենադարանին նուիրել տալ, ապագային մէջ Ղղթայակերի և Նալեանի գրական նշխարներն ու յիշատակը անկորուստ պահուելու համար, վասն զի՝ որ այդ ձեռագիրներն մասնաւոր անձանց վերաբերին, որոց ազգատոհմը Երուսաղիմայ մէջ՝ անուն և համբաւ ունենալով, արժանի եղած է ժամանակակից պատմիչ-քոյ անձնական համակրութիւնը և սէրը վայելելու։

Ղղթայակիր Դրիդոր պատրիարքը՝ յիշեալ նամակը գրած է մանաւանդ պէս, Հանենէ պատմիչ-քին նահապետական գերդաստանին բաղմանդամ անդամներք՝ իրարու հետ միշտ ներդաշնակ պահելու մասին։ Սոյն դիրքը՝ ի Պօլիս, Մայր — եկեղեցիէն, գրկուած նշանակուած է, և կը կրէ՝ ՌՃՁԻ Դեկտեմբեր ժ. թուականը։

Իսկ Նալեան՝ այդ նամակն ուղղած է Հնորհալի պատկերահան Տիրացու Յակոբին և եղբօրը՝ Տիրացու Յովհաննէսին, միանգամայն չհշտելով Տիրացու Յակոբին, որ Սաղմոսական ուխտաւորները անմխիթար չթողու։

Որպէս կ'երևի Նալեանի գրութենէն, Տիրացու Յակոբ՝ իւր ժամանակին ոչ միայն պատկերահանն էր, այլ և նշանաւոր երաժիշտն եղած է, և Ս. Յակոբեանց ուխտին ալելուիական սոխակը։ Վասն դի, Նալեան պատրիարք՝ ի մէջ այլոց, գրած է նոյն նամակին մէջ հետևեալ տողերը։

«Զի լինի թէ թուլանաս և կամ թէ դանդ առնուս յերաժշտական երգ եղմանէդ, այլ զժրաջանութիւնն յանձին կալեալ, զոր գաղջ ձայնիւդ, և անուշ եղանակաւդ, պարտս միշտ հոգևորապէս զուխտաւորսն մխիթարել ի մէջ սրբոյ Աթոռոյդ։

Եւ որպէս որ՝ լուսաւորեալ հոգի քեւին ձեր հաւատարմաբար ծառայեալ Սրբոյ Աթոռոյդ, նոյնպէս և դուք մինչև ցայժմ վարեցաք, խնդրեմ, ըստ նմանութեան քեւոյն Ձերոյ, դուք ևս կրկին զհաւատարմութիւնն ի ձեռաց չթողուք։ Եւ որպէս որ՝ լուսահոգի երանելի մեծ վարդապետ Հայրն մեր, որ աչօք երկու հայեր ի ձեզ։*

---

* Նպատակ ակնարկել կ'ուզէ Ղղթայակիր Դրիդոր Պատրիարքն։

ի գալն այդր, Աստուծով մեք ևս նոյն աչօքն կու հա-
յիմք ի ձեզ։»

* * *

Այս առթիւ մեր հաւատքած Նալեան մեծանուն պատ-
րիարքի շահագրգիռ անէկդոտները և սրախօսութիւն-
ները՝ ակամայ համառօտելով և պղտիզելով կը վուլթամ ի
լոյս ընծայել Աբէլեան Մատեանի միջոցաւ։

Հանճարեղ միջոց մը գտած է Նալեան՝ կարևոր հար-
ցի մը պատասխանելու համար։

Հարցումը եղած վայրկենին եթէ պատասխաներ, ան-
քաղաքագէտ պիտի նկատուէր Նալեան։ Եւ եթէ քանի
մը օր վերջը վախկոտութեամբ պատասխաներ, նոյն իսկ իր
բարեկամացը տհաճութիւնը պիտի հրաւիրէր։

Ուստի, ի՞նչպէս ընելու էր, որ հարցասէրն՝ ինքն մի-
անգամայն պատասխանած լինէր յարուցեալ խնդրոյն,
առանց զգալու։

Ահա այդ դիւան ըրած է նշանաւոր Պատրիարքն
Նալեան։

Նորին արքայնութիւնը՝ առաջարկուած հարցին ան-
միջապէս չէ ուզած պատասխանել, այլ երեք օր պայ-
մանաժամ՝ խնդրած է։

Այդ երեք օրերը մէկու մը հետ չէ տեսնուած. նոյն
իսկ իր օտարազգի մտերիմներէն և մեծ անձնաւորու-
թիւններէն ծածկուած է, առարկելով թէ՝ դատական
ծանրակշիռ խնդրով մը կ'զբաղի։

Ուստի չորրորդ օրն՝ դատական խնդրոյ մը գոյն տա-
լով ծանուցեալ հարցին, ըսյն վճռատու ատենին կը ներ-
կայէ յետադայ բանաձևով։

«Մարդ մը մեռնելով՝ իր բոլոր հարստութիւնը կը
ժառանգեն հանդուցելոյն տան երկու զաւակները։

«Այս միջոցիս՝ դուրսէն մէկն ալ ներկայանալով իրա-
ւախոհ դատարանին, իրը վախճանելոյն հարազատ զա-
ւակը կ'ուզէ ճանչցուիլ, և իրը այն՝ մնացած ժառանգու-
թենէն ինքն ալ հաւասար բաժինը կը պահանջէ. սակայն
երկուասան ժառանգորդները՝ դինքը կը մերժեն և չեն
ընդունիր իրենց իրր զուգարիւն եղբայր։

«Արդ կը հարցնեմ ձեռնհաս ատենին թէ, ի՞նչ վճիռ
և ի՞նչ իրաւունք տալ հարկ է վերջինին։

«կաղաչեմ, դրաւոր ըլլայ այդ վճռագիրը, որպէս զի հաղորդեմ, առ որ անկ է, և ազատիմ տրուած նեղութենէն։»

Է՛հ, այդչափ բանը չկրցի՞ք գիտնալ։ Շատ հեշտ և դիւրին է վճռել, կը պատասխանուի։ Քանի որ 12 եղբայրներն՝ զինքը համահայր չեն ճանչնար, այդ ժառանգութենէն բնաւ իրաւունք մը չունենալը՝ կը վճռուի, և դրաւոր հաստատուելով վճռագիրը կը յանձնուի Նալեանին։

Եւ Նորին սրբաշնութիւնը այս կերպիւ՝ խնդրոյ առարկայ եղող հարցն լուծուած և փակուած կը համարի։

* * *

Նալեանի համար զարմանալի չատ բաներ կը խօսուին։

Ապարանքէ մը ներս մտած ժամանակ՝ կը տեսնէ որ խաչաձև թղթեր սփռուած են սանդուղներուն վրայ։ Ասոնցմէ հատ մը՝ խոնարհելով առնելէ ու համբուրելէ յետոյ, ծոյը կը դնէ զայն, և կոխկռտելով կ'ելնէ վեր, ըսելով թէ՝ մէկ խաչ՝ կը բաւէ քրիստոնէին. զի Քրիստոսի խաչը՝ մի է։

* * *

Սեղան նստած ժամանակ՝ օտարազգի սեղանակիցներըը ակնապիշ կը դիտէին թէ, արդեօք Նալեան՝ պիտի համարձակի՞ հրապարակաւ իրենց մէջ խաչակնքել։

Նալեան՝ հիւրամեծար հրամայեչ֊հներու փոխան, «Ա՛յո, թէ այն, չէ թէ՝ ասկի՞ց ու անկից ուտեմ» հարցնելով, ձեւի մը տակ խաչակնքելէ վերջը, կոկսի ճաշել։ Եւ երբ դիտողութիւն կ'ըլլայ թէ՝ «Քրիստոնեայք առանց խաչակնքելու չեն ճաշեր». կը պատասխանէ Նորին Սրբազնութիւնը թէ՝. — Դո՛ւք, ներկայ էիք, երբ խաչակնքեցի այսպէս՝ ըսելով, կը կրկնէ ըրած ձեւը, սեղանէն կ'ելնէ, տեսուչադրելով և կնքելով վերստին սեղանը։

* * *

Ընթերցողք դիտեն թէ՝ հին ատենը ո՛րոնք Ծպտուն կը չրջէին։

Ծպտեալ Ցէվրիչի կերպարանքով պատկառելի մի

վեհ անձնաւորութիւն՝ իմանալով Նալեանի և իր մտերմին խիստ սերտ յարաբերութիւնը, կուզէ քննել մօտէն Նալեանի իմաստութիւնը։

Երբ կ'իմանայ թէ՝ Նալեան իր մտերմին ապարանքը կը գտնուի, կ'իջնէ հոն։

Հիւրընկալը գիտէ արդէն՝ ո՛րու դէմ կը գտնուի, ու ըստ այնմ կը շարժի։

Իսկ Նալեան՝ անիրազեկ և անտարբեր, իրեն եղած հարցման կը պատասխանէ։ Հարցումներ, որ՝ Սողոմոն իսկ պիտի մտածէր։

Վերջին հարցումը՝ ապագայի խնդիրն էր, որ սա՛ պէս մեկնած է Նալեան։

Աչխարհս՝ ընդարձակ պարտէզ մ'է, բաժանեալ պարտիզպաններու, մշակներու և այլ գործաւորներու։ Այն պարտիզպանը՝ որ գիտէ իրեն յանձնուած մասը մշակել և զարգացնել, Աստուած՝ կը բարերարէ զայն, և աչխատութեան արդիւնքը՝ լիառատ կուտայ, որ թէ՛ ինքը կը վայելէ, և թէ՛ իրեններըը։ Եւ այն մասը՝ զպարտիզպանը անկարօտ կը պահէ։

Իսկ այն պարտիզպանը, որ անհոգ կը գտնուի, կամ իր գործաւորներուն վարձքը չի հատուցանէր, պարտիզին այն մասը՝ այնչափ խոպան կը դառնայ, որ մինչև անդամ ուրիշներուն ձեռքը կ'անցնի, նորէն ծաղկելու համար։

Ձեր հարցման պատասխանը՝ փնտռեցէ՛ք ասոր մէջ։

Հարկ չկայ ըսել թէ՝ ուրիշ օրինակներով աւելի կը լուսաբանէ, այնպէս կը համոզէ, որ Ծպտեալն՝ կարի դոհ մնալով, Թաւշեայ կանանչ երեսով սամոյր մուշտակ մը ընծայ կը ղրկէ երկրորդ օրը։

* * *

Շարունակե՛ն ք աւանդական մանրամասնները։

Հրաշալիքներ ալ կը պատմուին, որ կը վերագրուին Ցակոբ Նալեան պատրիարքին, և մենք անոնցմէ երկուքը կրնանք հրատարակել։

Ա. — Մինչև յարդ կ'աւանդուի թէ՝ սարկաւագ մը, որ ի դէպս և յանդէպս բաղնիք կը յաճախէր՝ շատերու տրանջանաց առարկայ եղած էր։

Նալեան պարտաւորուած է քանի մը անդամ դիտողութիւն ընել և ի կարգ հրաւիրել, բայց ի զո՛ր։

Ա.յս փափկաճաշակ կղերիկոսը՝ իբր հե-էե-, բաղնիք-ներէն դուրս չէր ելներ, որով պատժոց խստագոյնին կ'ենթարկուի։

Սակայն հրաշալի կեանն այն է, որ երբ անոր դատապարտութիւնը կը գուժէին, միևնոյն վայրկեանին յիշեալ սարկաւագն՝ ողջամբ Նալեանի գովիկը կը գանուէր։

Ա.յս վէպիկը՝ ցարդ բերնէ բերան չատերէ կ'աւանդուի։

* * *

Բ. — Հոյակապ բարձր անձնաւորութիւն մը՝ ծանօթ իրեն բարեսրտութեամբը, գիշեր մը՝ մեծ անհագստութիւն կզգայ։

Բժիշկներ կը հրաւիրուին ի խորհրդակցութիւն։ Դարմաններ կը անօրինուին, որոնք բնաւ օգուտ մը չընծեղէ զատ, անհանգստութիւնն նոյնութեամբ կը կրկնուէր։

Կրկին դարմանական խորհուրդներ կը կատարուին։ Բայց ոչինչ օգուտ։

Վերջապէս, կանացի դարմաններ կ'առաջարկուին, որ նախարանին մէջ գտնուող փորձառու խաթաններէն։ կարևորութիւն չի տրուիր։ Բայց նեղութեանն ալ անմիջական դեղն ու դարմանը պէտք էր։

Ուստի, ճարահատեալ՝ հուսկ ուրեմն Յակոբ պատիրարքին կը դիմեն, իրը ժամանակին պիտուն և բազմահմուտ անձին։

Մարդու մը հոգին է, որ կը նեղէ զայն, կ'ըսէ։ Գացէ՛ք, դա՛ք այս ինչ դեղը՝ բայօթեայ պառկած մարդը, և ըսէ՛ք ատոր. — ի՞նչ է պատճառը՝ որ կը նեղէ։

Մարդը կը գտնեն, և խոստումներ կընեն։

Ասոր վրայ՝ յիշեալ անձնաւորութեան անհագստութիւնը պահ մը կը դադրի, բայց երբ խոստումները՝ մինչև 40 օր չի պարծադրեր, անհանգստութիւնը կը վերանայի, և չի դադրիր տաղնապելէ, մինչև որ խոստումները կը կատարուին։

Ստատիկ հրաման մը կուգայ Նալեանին, անարժան մը՝ քահանայ ձեռնադրելու համար։

Հրամանաբերին ներկայութեան՝ Նորին Սրբազնութիւնը կ'ըսէ անարժանին, — « Ես զքեզ այս ինչ անձին խոնել համար՝ հիմայ կրնեմ քեզի ՓՈՀԱ՛Ծ, ՓՈՀԱ՛Ծ, ՓՈՀԱ՛Ծ »։

Երբ անարժանն կը դիտէ թէ, «Ողանց ձեռնադրութեան՝ կարելի՞ է քահանայ ըլլալ։»

կը պատասխանէ Նալեան. — Խաթեր համար եղածն այսպէս կըլլա՛յ . . . ։»

Ջմռռնանք յիշելու թէ՝ նմանօրինակ քահանայական ձեռնադրութիւն մ'ալ՝ Անդրիանուպօլսեցի Պօղոս Պատրիարքն ձեռացուցած է, ի ներկայութեան պատգամաբերին։

Եւ միթէ՛ հիմայ ալ չե՞ն դանուիր անարժան ընծայայուներ . . . և արտակերդրոն միջնորդներ։

* * *

Նալեանի պատրիարքութեան ժամանակ՝ Հրէից ռաբբիներուն մէկ դումարը եղած է որուն մէջ վճռած են թէ՝ Հրեայներէն զատ՝ ոչ ոք կարող է արքայութիւն մտանել։

Ժամանակին կառավարութիւնը խնամալով, և ուղղով անուղղակի ղգացնել իրենց այդ մոլեռանդական դաւանութեան կամ Համոզման ծայրայեղութիւնը՝ ըստ -էպատէ անունով տուրք մը կը սահմանուի, որպէս զի արքայութեան դռնէն դուրս մնացողք՝ անպատասպար չմնան։

Եւ այս կըլլայ Նալեանի մի խորհրդաւոր բացատրութեան չնորհիւ, որ կը մեկնէ թէ, ամեն ազգ՝ իրեն մարգարէն ու կրօնուսոյցը ունեցած է, որոնք իրենց ժողովուրդը կապած են՝ մէյ մէկ ոսկեղէն սիւներու. բայց յետ յարութեան՝ յայտնի պիտի ըլլայ թէ՝ այդ սիւներէն որն է ճշմարիտ ու զուտ ոսկին։

Ուստի, քանի որ Հրեայք՝ օտար ազգերը դուրս կը ձգեն Արքայութենէն, պէտք է որ վրանի տուրք մը տան։

* * *

Օր մ'ալ քրիստոնէից կրօնին ճշմարտութիւնը կ'ուզէ ապացուցանել Նալեան։

Այս պարագային մէջ՝ իւր համբաւա՛որ սոպռ ընդդիմաբանին՝ ուրիշ փաստ չի մնար, բայց միայն ըսել թէ· — « Մեր կրօնին չի հաւատացողը՝ դիտցած թո՛ղ ըլլայ, սուչ կամ կանուխ իւր անձը կը տուժէ »։

Եւ Նալեան կը մրմնջէ· — Այդ տրամաբանութեան պատասխան չունիմ »։

* * *

Նալեանի ըսին թէ, «Դո՛ւն ապագային համար վճիռներ կարձակես։ Ըսէ՝ ներկան· — ու՞ր է հիմա այս ինչ երևելի անձնաւորութիւնը։

Ոտանաւորով մը կը պատասխանէ,

«Եղնի Գարու մէյտան,
Հայտար Ֆաշա՝ սէյրան »։

(Շարունակելի) Ս. Ե. ԱՃԱՌԵԱՆ

ԱՐՄԻՆԵՐՈՒՆ ԲՈՅՆԸ

Տակաւին կանուխ և բաւական ցրտին էր առաւօտն, երբ Տօնալտ, երկրորդ անգամ ըլլալով, հիւղակէն դուրս կ'ելլէր։ Բայց այս անգամ հովիտը տանող ճամբան չբռնեց, այլ դարձաւ այն ճամբան որ դէպ ի լեռները կ'առաջնորդէր։ Տօնալտ առանց կանգ առնելու շարունակ վեր կ'ելլէր։

Այսպիսի գահաւանդ մը մագլցիլ զմարդ ընչասպառ կ'ընէ· բայց Տօնալտ ի մանկութենէ սովորած էր մագլցիլ ամենէ խրոխտ սարերն իսկ, և ուստի հոգ չըրաւ այլ շարունակեց ընթացքը։ Վերջապէս հասաւ մինչ գագաթը՝ ուսկից յետանայեաց ակնարկ մը ուղղեց վար։ Լեռնային թարմ զեփիւռն կը շոյէր իր չառագոյն այտերն ու կը սրբէր ճակտին քրտինքը։ Աջդ կը տեսնէր մշուններով հեռու ընդարձակ հորիզոն մը, յորում կը պարփակուէին ծփանուտ լեռներ որոց կողերէն վիզը-

փրփրադէզ դետակ մը կը հոսէր ի վայր խոխոջելով. կը տեսնէր սպիտակ տուներն՝ յորս կանայք զբաղած էին իրենց առտնին գործերով։ Անգամ մ'ալ իր ակնարկը դարձուց երթալիք ճամբուն վրայ. և տեսաւ իր առջև բարձրացած սեպ ու ժեռուտ կատարներն որ կարծես կ'ուզէին մխիլ երկնից գոդը։ Իլուր մը մագլցած էր արդէն. բայց այժմ պիտի մագլցէր նեղ երկարածիգ եզր մը, ուր, եթէ վայրկեան մը գլուխը դառնար կամ սխալ քայլ մը առնէր, իր մահը անխուսափելի պիտի ըլլար։ Վերջը հայրը պիտի դար տուն և պիտի չգտնէր գինքն հոն. ա՜ն, ո՛րչափ առանձնօրէն պիտի ողբար իր կորուսեալ որդին։ Աւելի զարհուրելին այն է որ, մէկէն պիտի չվեռնէր, այլ չախ-չախուած պիտի իյնար, ժայռէ ի ժայռ թաւալելով պիտի խորտակուէին իր թևերն ու ոտքեր, և ի վերջոյ յաղթ ապառաժի մը ետևև, մէկը իր աղաղակը չլսած անօթութենէ պիտի մեռնէր . . . ։

Վայրկենի մը մէջ Տօնալտ խորհեցաւ այս ամէնը։ Բայց այս խորհուրդներն ալ վայրկենի մը համար էին։ Նորէն սկսաւ իր արշաւանքը առանց փոյթի, այլ մեզմիւ ու յարատև։ Ցաճախ իր ոտքերն կը սահէին լերկ ժայռին վրայէն. բայց նա իր սըրածայր գաւազանը կը հաստատէր ամուր գետնին վրայ ամէն անգամ որ նոր քայլ մը կ'առնէր։ Եւ այսպէս կամաց կամաց կը յառաջէր։

Հիմա հարկ եղաւ որ սեպ ժայռի մը կողին վրայ բացուած հաղիւ վեց մատնաչափ նեղ ճամբէ մը անցնի։ Հոս Տօնալտ կռնակը լաւ մը ժայռին փակցնելով կը յառաջէր, առանց նայելու ոտքին ներքև յանկարծ փոսացած անյատակ խորութեան։ Ամենայն ինչ լռին էր իր չուրջն։ Մերթ ընդ մերթ կը լսէր լերանց վայրագոտ հեղեղատներն և հեռուէն եկող այծից բոժոժներուն ղօղանջիւնը։ Ուրիշ բան մը չէր լսուեր, բացի երբեմնակի արձակուած սուր ճիչէն ոսկեղէն արծուոյն՝ որ, կը տեսնէր թէ ահա, կը բարձրանար օդին մէջ և յանկարծ կ'իջնէր իր նչմարած որսին վրայ։ Տօնալտ հասած էր հիմա իր ճամբուն ամենէն վերջին և ամենէն վտանգաւոր տեղին։

Ասիկա պարանոցի նման ժայռէ չրթունք մ'էր որ կը տաներ յոյժ բարձր և փոքր ինչ տափարակ տեղ մը որուն բարձրը գաղթական վրայ դրուած էր բոյնը, զոր՝ բացի մէկ տեղէն՝ ամէն կողմանէ կը չրջապատէին սոսկալի անդունդներ և լերծուն գահաւանդներ։

Այս դիւր տեղն ընտրած էին արծիւք իրենց բոյնը դնելու. և ինձ այնպէս կը թուի թէ ուրիշ աւելի լաւ ու յարմար տեղ մը չէին կրնար գտնել պաշտպանելու դիրենք կենդանի թշնամիէն։

Բայց լարախաղացէ, անդնար էր ո՛և է ուրիշ մկրու մը անցնիլ ասկէ, և նոյն իսկ լարախաղացը պիտի սարսռէր երբ տեսնէ բանդնդային վտանգները զոր, սակայն, Տօնալտ անտեսելով՝ սողոսկեցաւ իւր ձեռքերուն ու ոտքերուն վրայ, ամուր բռնելով ժայռը։ Այս կերպով բաւական տեղ գնաց. և, ի մեծ ուրախութիւն իւր, հիմա կարող էր լսել նօթի փոքրիկ թըռչնիկներուն նուաղ ու կերկերեալ ձայները։ Այս ձայները իրեն նոր զօրութիւն մը ներշնչեցին։ Բայց արդ հասած էր այնպիսի տեղ մը ուր ո՛չ թէ սողալով այլ ձեռքի վրայ կախուելով կրնար երթալ։ Տօնալտ ըրաւ զայն, և մեծ խնամով չաոաջ չարժեցաւ, մինչ յոյսը զրկէթ մոռցնել տուած էր իրեն թէ ինչ վտանգի մէջ կը գտնուէր։ Յանկարծ ձայն մը լսեց, որ իւր սիրտը երկիւղիւ համակեց։ Կարճ բայց սուր ճիչ մ՝ էր այն որ, կ՝երևէր թէ, երկինքէն կուգար։ Տօնալտ չնայեցաւ վեր, գիտնալու համար թէ մայր արծիւը օդին մէջ բոլորակ չրջան առնելով կ՝իջնէր վա՞ր . . . ։

Ինքն այս ձայնը լաւ կը ճանչնար, և գիտէր նաև թէ՝ եթէ մայր – արծիւը տեսաւ զինք, անշուշտ պիտի յարձակէր իր վրայ իրեն ահագին ճիրաններովին ու կտուցովը, լայնալից թևերովը օդը և զինք ծեծելով։ Եթէ իրօք մայր – արծիւը տեսած էր զինք, ալ ամէն յոյս կորսուած էր իրեն համար, և պիտի գահավիժէր այն սարսափելի անդունդը՝ ուր մութ լերանց խոռոչներէն վար, չատ վար, մթագոյն լիճ մը կար ահռելի, մեռեալ . . . ։

Վերջին միջոցը խորհեցաւ գործածել Տօնալտ։ Գլուխը ծռեց սուր ժայռին մէկ քովէն, և այնպէս կեցաւ անձայն, անչուկ, յաւիտենական ժայռին նման, օդնութեան աղօթք մը միայն շնչելով առ երկին։ Այնչափ սաստիկ կը բաբախէր իւր սիրտն որ կը վախնար թէ մի՝ գուցէ արծիւն լսէ։ Բայց այս ամենէն վտանգաւոր պարագային մէջ իսկ օդնութիւնը ինքնիրեն եկաւ հասաւ։ Արծուիկները, տեսնելով իրենց մայրը, այնպիսի ճիչեր բարձին, և այնչափ անօթի ըլլալնին հասկցուցին որ մէկ վայրկեան մէջ մայր – արծիւն թառեցաւ իւր բոյնին վրայ՝ մագլնեղուն մէջ ունենալով ճուկ մը՝ զոր դեռ նոր բռնած էր ծծէն։

Զաղերը մէկէն ըրենց կերակուրին վրայ ընկան լափելու համար. և մայր թռչունը զանոնք երկու վայրկենի չափ դիտելէ վերջ՝ նորէն իջաւ ձորին մէջ նետի մը արագութեամբ։

Թարգմ.

(Շարունակելի) ՑՈՒՀԱ. Ե. ԴԱՊԱՏՑԱՑԵԱՆ

ԻՄ ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

ԺԱ

Անդրէաս վարժապետ ի սկզբանէ անոր ընդունած էր լաւ և յոռի թուանիշերու դրութիւնը, լաւ նիշերու՝ որոշեալ թուէ մը վերջ կը յաջորդէր մրցանակ, մրցանակի՝ տոմսակ, տոմսակի ալ հարկ ուրեմն պատուատոմս։ Երկար ժամանակներ տևող այս դրութիւնը վերջին տարիները փոփոխութիւններ կրեցաւ թէ՛ ուսման և թէ՛ վարուց մասին հին դաստիարակը զատ զատ թուեր կը նիշէր մանաւոր տետրի մը մէջ՝ որ յատկապէս կը պահուէր այս նպատակով։ Ուսման կէտերը հոգ կը տանէր նըշանակել նա՛և աշակերտի տետրակներու մէջ։ Տարեգլխին վարուց և ուսմանց լաւ և յոռի թուերը կը համրուէին և անոնց համագումարն ուրոյն ուրոյն կը նշանակուէր չրջանակեալ վիճակացոյց տախտակի մը վրայ՝ որ սրահին պատէն կախուած կ'ըլլար դպրոցական տարւոյ բոլոր ընթացքին մէջ։ Այս կէտերը հիմ կը բռնուէին պարգևաբաշխի առեն՝ եթէ սակայն ազգային անտուկի դրամական միշտ անճուկ վիճակն այդ աղքատիկ հանդէսի կատարումը կարելի ընէր։

Անդրէաս՝ հին ժամանակի այդ վարժապետն՝ իր կենաց վերջին տարիներու մէջ Փիլիպպեանէ աւելի բարոյական պատիժներու օգտակարութիւնը հասկցած կ'երևար, և այս ուղղութեամբ ինչ ինչ միջոցներու կը դիմէր յոլովակի... իր կերպովը։ Զարգացեալ յանցաւոր աշակերտներ քանի մ'օրուան կամ տրոզ չաբաթուան մը համար առանց ձայնուծիւնի կ'աքսորուէին վերի սրահէն — երկինքէ տարամերժ մէյմէկ Անգղոններ — դատապարտուելով վարի սրահը՝ վարի Բաբելոնը յաճախել նորատի բղէղներու խառնաղանճի մէջ։ Ինչ կորանք անոնց համար։ Տակաւին աչքիս առջևն է յառաջադէմ աշակերտ մ'որ իր տղայական չարաճճուելիութենն իսպառ չէր մերկացած և որ եռթարկուեցաւ այս անպատուիչ վատրման։ Գրքերու և առա-

բակներու ահագին դէպ մը թևին տակ խոզուց վերի փառաւոր սրահը՝ բարձր Ալի հպատը՝ ստորին աշխարհը սնիքոր մարմուկներու մէջ երթալ իրեն նշանակուած տեղը նստելու համար։ Ո՞ր Փիզիգական պատիժը կրնար երբէք ունենալ այսքան ներդործութիւն։ Կը դողային բարձր դասերու աշակերտք որ մի գուցէ յոռի վարմունքով մ'ենթարկուին այդ դժոխի նուաստութեան։

Բարոյական այս միջոցի նպաստաւոր արդիւնքէ քաջալերուած՝ նուաստիչ ուրիշ հնարքներ ալ սկսած էր ի գործ դնել հին դաստիարակը . . . միշտ իր կերպովը և յաւէտ յաջողութեամբ։ Յատկապէս կը բերէր նա չաքար, լէպլէպի և խարկած սիսեռ և պատժել ուզած աշակերտն իր քով կանչելով ի տես բոլոր սրահին՝ որ բարձրաձայն կը ծիծաղէր, անոր ափին մէջ կը լեցնէր զայն։ «Ա՛ռ, ա՛ռ ասիկա, տղաս,» կ'ըսէր յորդորական շեշտով մը, մինչդեռ ծաղր ու հեգնութիւն նկարուած էին անոր բոլորչի դէմքի վրայ։ Երբ դրպանէն կը հանէր նա այդ ուտեստները բաժնելու համար՝ տեսնելու բան էր իրենց անձէ կատած ունեցողներու՝ «քոստոներու» անձկութիւնն ու սրտադողը։ Կորացուցիչ ծամոցէն իրենց մաս և բաժին սիրտ եկլե՞ր արդեօք։ Իսկ վատահք իրենց ջանից ու վարուց վրայ՝ աներկեան հրճուանօք կ'սպասէին այդ քաղքահի տեսարանը՝ որ այնքան սիրտ զուարճացնէր միրենք։

Անգամ մը՝ չդիտեմ ի՞նչ յանցանքի համար իր քով կը կանչէ մեծակակ աշակերտ մ'որ մեծ չէր խելքով և որ բազմիցս յանդիմանուած ու պատժուած էր ընդունայն, և մանաւորապէս բերած մեծակակ մէկ նարինջը հանելով գրպանէն՝ «Ա՛ռ, տըղաս, կ'ըսէ իր հեգնական ծանօթ ժպիտով ա՛ռ սա նարինջը, դեռ մանուկ ես, քեզի համար բերի զայն», Միծաղներ։ Անհամոյ նուէրը չէր կարելի մերժել. Էէ՛ք աշակերտը զայն ձեռքը բռնած՝ տեղը կը դառնար չիկնած և կորակոր։

Նարինջով մեծարուած աշակերտ մը միտքը կը դնէ սրահէն ելլելուն վայելել դէմ այդ զուարճալի պատուն՝ որ իր այրած սիրտը փոքր ինչ պաղչտկելու սիտի ծառայէր։ Զարհամի դասընկեր մը գրասեղանին ետևէն ուժով մը կը սեղմէ պատժոյ պարգևը՝ որու հիմնեղ ջուրերը կտաւէն քամուելով կ'սկսին հոսիլ դէպ ի վար։ Ինչպէս հէք աշակերտն երթար բողբոջէր՝ սրահի ծիծաղներն նորէն իր վրայ հրաւիրելով . . . ։

Անգամ մը լուսնեան՝ այսինքն սերտողութեան ժամանակ Անդրէաս վարժապետ կը դիտէ որ աշակերտ մը — Մանիասցի

— և որ եթէ ին քահանայ մը նշանաւորութեան, կը ննջէր խոր քունով։ Իսկոյն ոտանաւոր մը կը չինէ — անշուշտ դրաբառ — Ա-թենասէ աւելի Մորփէոսի երկրպագու այդ աշակերտի վրայ՝ որուն անկոգ ընթացքը ցաւ և զայրոյթ կը պատճառէր իր սրտին, և որուն արթնցած պահուն ժպտուն և հեգնալի նայուածքն անոր ուղղելով կը կարդայ դրածն ի լուր բոլոր սրահին։ Աշակերտներէն չատեր օրինակած են այս ոտանաւորը՝ որ պահ մը զուարճացուցած էր դիրենք, և որ կ'սկսէր այսպէս.

Մանիսացի՛ դ իմ քնէ՛ծ,
Ո՞ւ, դի՞նչ առնես, ի յուշած.
Զանգին վայրկեանս քոյին կենաց . . .

դժբաղդաբար չորրորդ և հետագայ տողերը չենք յիշեր։ Խնդաց բոլոր սրահը, իսկ ափշած ու յանկարծակիի եկած թեզմ Մանիսացին՝ որուն քունէ կարմրած երեսները չառապոյն դարձան, դետինը կ'անցնէր կորանքէ։

Անդրէաս վարժապետ որ այս անգամ «քնէած Մանիսացին» կը հարուածէր իր բանաստեղծական կծու սլաքներով, սովոր էր նախասիրած աշակերտներուն վրայ՝ իւրաքանչիւրին ձրից ու յատկութեանց համեմատ դրուատից ոտանաւորներ դրել՝ զորս ասոնք՝ ինչպէս նաև ուրիշներ՝ կը փութային մատնաւոր տետրակներու մէջ օրինակել ու պահել իրր յիշատակ։ Բազմաթիւ հատաքածոյներ մեր աչաց առակ ունինք՝ զոր կը պարտաւորինք մեր հին ընկերներու ազնիւ կամարարութեան։ Տեսանել պէտք է թէ ինչ գայուն գրչով և հայրական ինչ անզատում դորովով գրուած են անոնք մէկ ծայրէ ինչուան միւսը։

Անդրէասի սիրական աշակերտներն եռանդ և մանաւանդ բարի վարք ցուցնողներն էին միշտ՝ հարուստի թէ աղքատի զաւակներ, և բարի վարժապետն նեղ պարագաներու մէջ մեծ քաղցրութիւն և ներողամտութիւն կը ցուցնէր անոնց։ Այս մեծ նաչնարհեալ աշակերտներու թուոյն մէջ գտնուելու բաղդն ունէի և ես, և իրր այսպէս՝ անգամ մը թէև փոքրիկ արժանի յանցանքի մը մէջ բռնուած՝ այլ սակայն ընդհ դատ անողք վարժապետին առջև, թէ ինչ էր յանցանքս — ուսանողական կեանքիս մէջ միակ յանցանքը՝ զոր դործած եմ —, ինչ պարագաներու մէջ գործուեցաւ այն, և ինչպէս խնայեց ինձ Անդրէաս վարժապետ՝ առանց սակայն զանց ընելու հայրական յանդիմանանքն ու ազդարարութիւնը, այս պատմութիւնս հետագայ հոտուածի նիւթը պիտի ըլլայ։

Շարունակելի ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐՆԱՆ

ՄԻՍԻ ՎՐԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

8. Սպանոռելէն ֆնէլ եֆոռը անոյծ ֆէլոյը. — «Այն զանազան միսերը, կըսէ Պէքէրէլ, որչափ հոտելու մօտենան այնքան դիւրաւ կը մարսուին, բայց այնքան չէ որ կատարեալապէս հոտիլ ըսկսին, այն ատեն աւելի ծանր կը մարսուին և երբեմն բոլորովին չեն մարսուիր։ Հոտելու այս վերձեցումը միսին նեարդները իրարմէ բաժնելով անոր խառնիչքը կ'աւելցնէ և կը կակղեցնէ, այսպէս հինցած միսը ստամոքսահոյզին մէջ դիւրաւ կը հալի»։

9. Եֆէլը- եղանակը. — Հում միսը ամենէն դիւրամարս և ամենէն առողջարարն է, սակայն և այնպէս ամեն մարդ զայն միշտ եփելով կ'ուտէ, վասն զի եփած միսը աւելի ախորժելի և աւելի դիւրին կը ծամուի ու կը բաժնուի։ Միսը զանազան կերպերով կը պատրաստեն և այս պատրաստութեանց եղանակներուն համեմատ իրենց աննդական և մարսողական յատկութիւններն կը տարբերին, ինչպէս կասկարած, խորոված, յօշած (քըյմայ) ղոգեփած, փուռը եփած, խաշած, ապանձած (քաւուրմա (, երշիկ (սուճուք, պաստրմա), աղած և այլն։

Կասկարած (քիւլպաստը) միսը իր բոլոր աննդարար յատկութիւնը կը պահէ և աւելի դիւրամարս կ'ըլլայ. խորոված (քէպապ) միսը խիստ առողջարար, խիստ աննդարար, գեղեցիկ հոտով և ախորժելի համով է, բայց կասկարածին բաղդատմամբ նուազ մարսելի է։ Ամենէն լաւագոյն կասկարածը կամ խորովածը, խիստ ուժով կրակի վրայ նախ քիչ մը ձգելէ վերջը թեթև կրակի մը վրայ եփելով կ'ըլլայ. յօշած միսը իր մէջ պարունակած ճարպին և ջիղերուն պատճառաւ աւելի դժուարամարս է. ղոգեփած և փուռը եփած միսերը նոյնպէս դժուարամարս են և նուազ համով հոտով քան կասկարած և խորոված միսերը։ Գալով խաշած միսին՝ աննդական, մարսողական և համի տեսակէտով՝ կասկարած և խորոված միսէն չատ վար է։ «Արդարև, կ'ըսէ Բրուսթ, միսը եռացած ջուրի մէջ երկար ատեն ճլալով խորապէս կ'այլակերպի, իր բնատպիտոյին և ուրիշ հալելիք աննդարար նիւթերը ջրին կուտայ, այս մաքրուած աննդարար և դիւրամարս է, իսկ մնացած միսը իր մէջ կը պահէ աննդարար բնաժիսին ամրոդլութիւնը, ուրեմն խաշած միսը առողջ և ուժով ստամոքսի համար լաւ կերակուր մ'է, բայց խորովածին բաղդատմամբ միշտ դժուարամարս։ Այսու հանդերձ կա-

րելի է համով և ախորժելի խաչած միս մը պատրաստել, սա-
կայն այն առեն պէտք է հաճելը զոհել, այս արդիւնքը ձեռք
բերելու համար լաւագոյն խորովածին նման անմիջապէս սաս-
տիկ տաքութեան մ'ենթարկելու է, այսինքն միսը յանկարծ
խիստ եռացած ջուրի մէջ ձգելու է որ բնաստիտային նիւթը
միսին երեսը ծեփի մեան խտանալով ջուրին մէջ չը հալիր, այս
կերպով պատրաստուած խաչած միսը սննդարար և համալ
նիւթերը իր մէջ կը պահէ, հետևաբար ջուրը անօգուտ կը
դառնայ »։

Աղանձած և երչիկ միսերը ընդհանրապէս նուազ սննդարար
և աւելի դժուարամարս են, սակայն ախորժելի համ ու հոտ
ունին. փափուկ և հիւանդ ստամոքս ունեցողներու անյարմար
են։ Վերջապէս աղած միսերը թէև աւելի սննդարար, սակայն
այնչափ ալ դժուարամարս են. աղը միսի նեարդները կծկե-
լով զայն աւելի խիտ աւելի թանձր կընէ և լորձունքելը կը
դժուարի։

10· Ա՛ոդջարար ճաշերու յարմարութիւնը. — Ա՛ոդջարար միսերու
յատկութեանց վրայ ատրև կը քաղենք Փարիզի Թաղապետա-
կան ատարաբուծարանին Տնօրէն Տ՛ք Տ. Շ. Ժիրարի 1885ին հը-
րատարակած տեղեկագրին հետևեալ կարևոր տեղեկութիւն-
ները։

« Գոյնի տեսակէտով միսերը երկու կարգի կը բաժնուին
ապիտակ և ջահնաւոր։ Սպանդանոցներու ճերմակ միսերն են հոր-
թի, գառնուկի, ուլի, խոզի միսերն. կարմիրներն են եզի, ոչ-
խարի, ձիու միսերը։ Ա՛ահասարակ կենդանին որչափ ծեր ըլլայ
միսն ալ այնքան կարմիր կ'ըլլայ, այսպէս երեք չորս տարուան
եզի մը միսը երկու երեք ամսուան հորթի մը միսէն աւելի կար-
միր է. ցուլին միսը քիչ մը թխագոյն կարմիր կըլլայ։ Նոր ըս-
պանդուած կենդանիի մը միսը երկու երեք օրուան միսէն ա-
ւելի թոյլ կըլլայ, չոր և ցուրտ օդ մը միսը աւելի կը կարծրա-
ցընէ, մինչդեռ խոնաւ օդը զայն կը կակղցնէ և անոր անփայլ
գոյն մը կուտայ։ Իւղոտութիւնը կրնայ արտաքին ըլլալ, և կամ
երիկամներու քովերը կուտակուիլ, որ յայնժամ ճրագ- անուա-
նը կառնէ, իւղոտութիւնը կրնայ նաև մկանուներու խորերը
թափանցել։ Մարմինը ծածկող իւղը եթէ 1 կամ 2 սանթի-
մէթրը անցնի կենդանիին լաւ տեսակ ըլլալը կը յայտնէ. ըս-
պանդուելէ մէկ քանի ժամ վերջը իւղը ճերմակ կամ թարմ
կարագ եղի նման դէղնօրակ կ'ըլլայ։ Եթէ մսի կտորի մը վրայ
իւղի խաւը չը լինի կը հասկցուի թէ այն միսը խորտնկ տեղե-

րէ կարուած է, կամ ցուլէ մը և կամ նիհար կենդանիէ մը կարուած է։ Եթէ ճրագուն չատ է և օդին մէջ չուտով կը խտանայ և եթէ գոյնը ճերմակ կամ թեթևագոյն դեղնկէկ է, սպանուած կենդանիին լաւ տեսակ մ'ըլլալը կը յայտնէ։

Վաճառականութիւնը միսը երեք կարգի կը բաժնէ։

« Առաջին տեսակ. Եզի միսը խիստ կարմիր է, իւղը չատ և ճերմակ, մսին կարուած երեսը խիստ մանր և խիտ հատիկներով ծածկուած կ'ըլլայ, առանձգական յատկութիւն մը ունի և թեթև ճնշումով մը թիթու և քաղցր հոտով կարմիր գարմ ջուր մը կուտայ։ Եզի առաջին կարգի միսը մատղաչ անասուններէ կ'ստացուի, եղերու 4 — 8 և կովերու 4—6 տարեկանը նախամեծար են։ Ոչխարներու առաջին կարգի միսը խիտ, սեղմ, կակարմիր և քիչ չատ ճրագուով պատուած կ'ըլլայ։ Հորթին առաջին կարգի միսը ճերմակ կամ վարդագոյն կ'ըլլայ, իւղ չ'ունենար բայց երիկամները դիմացկուն ճերմակ ճարպով մը չրջապատուած կ'ըլլան։ կամէջ չը կարուած 5 — 6 շաբաթուան հորթերուն միսը այսպէս են։ Խոզին լաւագոյն միսը մարմնագոյն կամ թեթև վարդագոյն, նուրբ հատիկներով ծածկուած, խիստ դիմացկուն է և չատ դիւրութեամբ աղ կառնէ. ճարպը ճերմակ կամ թեթևագոյն վարդագոյն է, իւղը հալեցնելով քիչ կը պակսի։ Խոզի այս առաջին կարգի միսը 12 — 15 ամսուան կենդանիներէն կ'ստացուի որք բաւական չափով և կամեղէնով անած են և ամրձիկնին ոլորուած, և անոնք որ դարեջուրի մնացորդներով, իւղատ ջրերով, ձիու մսերով և աղտեղութեամբ անած են չատ կարծր և չատ ջրոտ միս մը ունին, որ խիստ դիւրաւ ալ կաւրուին։ Ամրձիկնին չլարուած խոզերը չատ կարմիր, նուազ աննդարար և չաճախ միզային հոտով միս մը կ'ունենան։ »

« Երկրորդ տեսակ միսերը որ մսավաճառները ֆոթոկոթոլեան (հիւանդ անոցներու, լիսէի և այլն) կ'անուանեն, անժխտելի կերպով լաւ են, բայց ոչ առաջնոյն չափ։ գոյնը կարմիր, առաձգականութիւնը և խտութիւնը չափաւոր, ներսի ճարպը քիչ, արտաքին իւղի խաւը նուազ նուրբ և նուազ թանձր է։ այս միսերը 8—10 տարեկան, խիստ ոսկրակազմած և չատ ուշ պարտուցած եղերէ կը հայթայթուին, ինչպէս նաև 5—7 ամսուան յսի կովերէ, մորը կամ էն կարուած 3—4 ամսուան հորթերէ, երկարօրէն պարարտացած ոչխարներէ, խիստ մատղաչ և ամրձիկները չատ ուշ ոլորուած խոզերէ, այս վերջինց իւղը թոյլ է և աղը դժուար կ'առնէ »։

(Շարունակելի)

Երիվա

ՏՕՔԹ. ՓԱՇԱՅԱՆ

ՊԱՋԻԿԸ

(ՔՄԱՅԻՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ)

Խնձորի տեսարանը տակաւին տեղի ունեցած չէր։

Հետեւաբար Ադամ և Եւա այնքան երջանիկ էին, որքան կ'ըլլան դրեթէ ամեն անոնք՝ հարսնիքէն միշտ առաջ, բայց երբէք ետքը։

Եւ ինչո՞ւ երջանիկ չըլլային. քանի որ Արարիչը դեռ ժամանակ ունեցած չէր ստեղծելու, նախանձը, դրամօժիտը, ամուսնական երբեմն-երբեմն կանանց ջղային դրուխիւնը. սիրուն կըլորիկ սպասուհիները, դերձակուհիներուն հաչուեցուցակը, արդուզարդը, թատրոնը, պարահանդէսը և վերջապէս այն ամեն պարագաները որոնք եթէ այսօր դոյութիւն չունենային, ամուրիութիւնը երջանկութեան գլխաւոր պայմանը չէր ըլլար։

Բնաւ մի կասկածիր։

Մայիսի առտու մը եդեմի այդ հիւրերը սաղարթախիտ կաղնիի մը ետին ապաստանած, անմեղ մեռքի կտասկներ կ'ընէին իրարու, երբ յանկարծ Եւա հարցուց.

— Այսօր ինչ պիտի ընենք։

— Ինչ որ Տիկինը կը փափագի, փութաց պատասխանել Ադամ։ Աղէկ մը չեմ յիշեր թէ « Տիկին » ըսաւ թէ « Օրիորդ », բայց աւելի խելացութիւն է կարծել թէ « Օրիորդ » ըսած ըլլալու է, քանի որ այն ատեն տակաւին թերհաւատի դրութիւնը հնարուած չէր, եթէ չեմ սխալիր։

— Այսօր օդը աղէկ է։ — կմկմաց Եւա — եթէ կուզես ծանկ պտոյտ մը ընենք քալելով։

Քալելով կրնար ալ չաւելցնել որովհետեւ դիտնալու էր թէ Ադամ երբէք չպիտի ներէր որ իր կինը պէտէպէտով պտոյտ մը ընէ. կառքով պտտելն ալ մտքէն անցնելու չէր, քանզի դրախտաբնակ կառապանները խելքէ դուրս դիներ կը պահանջէին ամենէն կարճ ճամբուն համար, առարկելով թէ « կառապանի մը գործը կարծուածին չափ դիւրին չէր այնպիսի տեղի մը համար որու փողոցներուն մէջ մէկ մարդ մ'անդամ չէր գտնուեր . . . կոխելու, կոխկրտելու համար »։

Նախամարդը քալելով պտոյտի մը առաջարկութիւնը սիրով ընդունեց և եւային դառնալով.

— Գալէ՛, ըսաւ։

Բայց եւս, խորամանկ ինչպէս իր ամենէն յետին թոռնուհին, դիտեր տուաւ թէ միատեղ քալելը կրնար բանբասանքի տեղի տալ։

— Ես երթամ դուն կամաց կամաց եկուր, ըսաւ, անցնելով օրուան առուակին քով քեզ կսպասեմ։

Այդ օրուան պատճին արդիւնքն է որ մինչեւ հիմայ ամուսնացողներուն յիշել կուտան թէ «Էրիկը հայր մայր մոռնալով, կնկանը եւեէն երթալու է»։

Ձիշտ քառորդ մը ետքը Տիկինը որոշեալ առուակին քով կը հասնէր, անդիտակցաբար, առանց կանխամտածութեան՝ անոր ջուրին մէջ նայեցաւ։ Առանց այդ նաւածքին գուշէ Ադամ ամիսւած չէր ըլլար իր հացը ճակտին քրտինքովը ուտելու։ Հայելին քանի քանի կիներու կորստեան պատճառ եղած է։ Մարդկութիւնը այդ առուակին կը պարտի իր կորուստը։

— Օ՛, մեր պարոնը կրնայ պարծենալ թէ ինծի պէս կին մը ունի — ըսաւ նեւա — իր դէմքը ջուրին պայծառութեան մէջ տեսնելով։

Այդ մտածութեան միջոցին Ադամ վրայ հասաւ, և մասնաւոր փութկոտութեամբ մը նեւայի ներկայացուց փառաւոր վարդ մը, զոր ճանրան եկած առենը բրցուցած էր։

— Կը ներես որ, ըսաւ, մազերուդ մէջ զետեղեմ։

— Ինչո՛ւ չէ. բայց նայէ որ մազերս չաւրեա։

Նեւա գլխուն վրայ այդ վարդը տեղաւորելէն ետքը, կրկին առուակին մէջ նայեցաւ։

— Եմ այսօր ալ չի յայտնուիր, ես կին չեմ — ըսաւ մտովին, և խօսքը Ադամի ուղղելով — կուզե՞ս, պատոյանիս չարուշնակելէ առաջ քիչ մը հանդիստ ընենք հոս։

— Ինչի կարելի՞ է բան մը մերժել, հոգիս. պատասխանեց Ադամ։

Եւ քովէ քով նստան մարդագետնին վրայ, ղեղմի ծառի մը չուքին մէջ։

Տեղին յարմարութիւնը, փչող բարակ զեփիւռը, թռչուններուն իրարու եւեէ վազվզելը, այս ամենը չդիտեմ ինչ մը դրին անոնց հոգւոյն, սրտին մէջ որով այդ օրը նախամարդերը իրարու համար տարբեր ակնարկներ, տարբեր զգացումներ ունեցան։

Չասուն, թաւչպատ ղեղմները գլուխնուն վրայ մեղմօրէն կը տատանէին։

— Նայ՛է, նայ՛է, ինչ՛ հիանալի պատուղ է ասիկայ, ըսաւ Եւա անոր՝ որու մէկ կողը ըլլալու պատիւն ունէր։

— Աքանչելի՛, աւելցուց Ադամ, դեղձը պատուղներուն թագուհին է, ինչպէս վարդը ծաղիկներուն. մէկին համը և միւսին բոյրը դերազանցող ոչ պատուղ կայ և ոչ ծաղիկ, ի բաց առեալ մեր այտերը, Տիկին։

— Ջնարհակալ եմ, Պարոն, և ատոր փոխարէն, մեզի հաճելի ըլլալու համար, կուզեմ հաստատել ձեզ թէ դեղձէն աւելի համ և վարդէն աւելի բոյր ունեցող բան մը կայ, զոր ձեզ կարենալ նուիրելուս ուրախ եմ, բայց քիչ մը մօտեցէք, ըսաւ, և առաջին կինը, ալ այսը Ադամի շրթերուն ներկայացնելով։

— Անուշասիկ հա՛մ, և անմիջապէս ճախը դարձնելով, ահաւասիկ քոյր ըսաւ, ինչպէս կը դանեա։

— Զգւխէ, Տիկին, զգւխէ։

Պաչիկը այդ օրը ծնաւ և անունը դրին Համբոյր։

Ե. ԱԼՓԻԱՐ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Մալաթեան էֆէնտի Մ-ւէին մէջ բաւական մանրամասնօրէն բացատրած էր թէ ի՞նչ դիրք և պայմաններ ունենալու է վարժարանի մը շէնքը, սակայն դժբախտաբար Պոլսոյ մեր և ո՛չ մէկ վարժարանը կը համապատասխանէ այդ առողջապահիկ պայմաններուն. ու հիմա մեր ունեցած վարժարանները չե՛նք կրնար քանդել՝ պատուհանները տեղափոխելու կամ դասարանին տարածութիւնը ընդարձակելու համար, բայց դէթ ասկէ հետը շինուելիք և նորոգուելիք դպրոցներուն համար այդ պայմանները, առողջապահիկ այդ անհրաժեշտ պայմանները, պիտի գործադրո՞ւին, հարկ եղած հոգածութիւնը պիտի տարո՞ւի այդ մասին. կը տարակուսիմ քիչ մը։

Վարժարանի մը դիրքին ու միջավայրին թէև մասամբ կախեալ է աշակերտներուն առողջութիւնը, բայց այս մասին մանաւանդ մեծ դեր մը կը կատարէ։ Պէտք է յաճախակի վարժութիւններով մարզել ու ճկել աշակերտներուն մարմինը, իրենց խոնջեալ ուղեղը զբօսանքներով ու մարմնամարզով կաղդուրել, մարմնական այլ և այլ շարժութիւններով զօրացնել անոնց դնդերները, և այդ մարզանքի զուարթ վայրկեաններուն մէջ, մուչնել տալ այն խոնջանքն ու տարտուկը, զոր կրնայ պատճառել աշակերտը, ամէնէն ուսումնասէրն իսկ, միօրինակ և նստուկ սերտողութեամբ։

« Ֆիլէթ-ով ոչխարս կանուանեմ ես ». Դուք կրնաք ըսել « պատ-ով պատնէշ » Եւրոպայի մէջ շատ տարնէ ի վեր, և, հոն, բոլոր հանրային վարժարանները ընդունած և պարտաւորիչ ըրած են մարմնամարզը, որ մեր շատ մը վարժարաններուն մէջ, դժբախտաբար, դեռ չկրցաւ մուտ գտնել. մենք տակաւին անպէտ ու աւելորդ բաներ մը կը նկատենք մարմնական այդ դիւրաթիք շարժուձեերն ու առողջարար այն խաղերը. անպէ՞տ ու զեվզեկ բաներ, որուն համար վարժարանին « միշտ անձուկ պիւտճէն » գումար մը չի կրնար յատկացնել.

Աւելորդ է խօսիլ մարմնամարզին օգտակարութեան վրայ, ինչպէս աւելորդ և ծիծաղելի պիտի ըլլար խօսիլ անուշդին պէտքին և կարևորութեան նկատմամբ. բայց ի՞նչ ըսել մեր այն վարժարաններուն, որոնք ուսումներու և դասերու յաւելումներով կը ճոխացնեն իրենց ծրագիրը, կը բաղմապատկեն աշակերտներուն աշխատութիւնը և բնաւ բան մը չեն խորհիր ընել անոնց առողջութեանը մասին. ինչո՞ւ մարմնամարզն ու առողջաբանութիւնը միւս դասերուն չափ կարևորութիւն չունենան, և ինչո՞ւ, օրինակի համար, հայ. գրաբարի ուսման չափ հոգածութեամբ դաս չտրուին մեր բոլոր վարժարաններուն մէջ. ի՞նչ բանի պիտի ծառայէ մեր հայրերուն ներգաշնակ և ճոխ լեզուին հմտանալ, երբ մարմինը անիերդաշնակ և քայքայելու վիճակին մէջ է. կան քանի մը վարժարաններ, ինչպէս Պէրպէրեանը, ուր մարմնամարզին հարկ եղած հոգածութիւն և կարևորութիւն կը տրուի, կան ալ, ինչպէս Կեդրոնականը, ուր տարին երեք չորս անգամ միայն, անգոհացուցիչ կերպով, փորձեր ու վարժութիւններ կըլլան. իսկ ուրիշ շատ մը վարժարաններու մէջ մարմնամարզի անունն անգամ չի լսուիր.

Ի՞նչ բանաւոր առարկութիւն կրնան ընել մարմնամարզի այնքան կարևոր դասին մեր վարժարաններուն մէջ՝ կանոնաւորապէս մուտ գտած չըլլալուն համար. աւելորդ ծախքի դո՞ւռ մը կը համարին, թէ ժամանակի անբաւականութիւնը պատճառ կը բռնեն. ոչ մէ՛կը և ոչ ալ միւսը լուրջ և խելացի առարկութիւն մը կրնան սեպուիլ, երբ խնդիրը ուսանողներու առողջութեան վրայ է. վարժարանները միահամուռ նպատակ ունին և կը նկրտին միտքը զարգացնել, փոքրիկ չանք մըն ալ ըլլալու չէ՞ մարմինն ալ նոյն հարկ եղած ուժն ու զարգացումը. « Այուղ գործ՝ աղուղ հարթ գլ » ըսուած է. ահա՛ խօսք մը որ ճշմարտութեան և փորձառութեան վաւերականութիւնն ու նուիրագործումը ունի, կրնա՞նք ուրանալ. Առողջ ու բեղուն միտքը չի կրնար գոյութիւն, կամ մանաւանդ, յարատև գոյութիւն ունենալ վատառողջ մարմնին մէջ. Խորհո՞ւրդ եք երբեք ափերով կարմրուկ ոսկի (!) լեցնել ձեր քսակին մէջ, առանց կանխաւ հաւատարի ըլլալու առնոր ունեցած պարունակութեանն ու տոկունութեանը. ոսկիները պիտի թափին, եթէ պզտիկ կամ հինցած է ձեր քսակը. բայց դուք ձեր հնչուն և սիրուն այն մետաղները, ձեր հարստութիւնը, դիմացկուն դրամապանակներու մէջ միայն կը տեղաւորէք՝ ապահովութեան համար. նոյն ապահովութիւնն ու նոյն մտածումը ինչո՞ւ չըլլան նաև այն ոսկի ուսումներուն, զոր կը ջանաք տեղաւորել աշակերտներու մտքին մէջ. բնա՞ւ բան մը չգիտի արժեն և բանի մըն ալ չգիտի կրնան ծառայել այդ ուսումները, երբ աշակերտին մտրմինն ու միտքը հարկ եղած պատրաստականութեան ու կորովը չունին զանոնք ընդունելու համար.

Մարմնական մարզանքներն ու լուրջ զբօսանքները ամենէն աւելի պիտի նպաստեն մեր բարձրագոյն կամ երկրորդական վարժարաններ յաճախող ուսանողներու առողջութեանը. անոնց մտաւորական միօրինակ աշխատութիւնը անկարելի և անբնական է որ չխանգարէ, չխախտէ իրենց առողջութիւնը, որ երկաթէ չէ անշուշտ։ Երբ անցնին անպզտալաբար սահին «մանկութեան զուարթ օրերը» և երբ տղան՝ խորհող պատանի մը դառնայ, և եթէ ուսումնասէր է, նոր եռանդով մը և աւելի տարբեր սիրով մը պիտի փարի իր դասերուն, օգտակար ընթերցանութիւններու մէջ մի՛այն հաճոյք պիտի փնտռէ, և, ինքզինքը դպրոցական ու գրական աշխատութիւններու մէջ ամփոփելով, ա՛լ չպիտի ուզէ և չպիտի կրնայ զբօսանուէ կամ պտըտիլ. շատ են այս տեսակ ուսանողները, և որոնք, բնականաբար, կը տուժեն ուր ուրեմն։

Եւ մտաւորական չափազանց աշխատութիւնները չեն միայն որ կ'ընկճեն ուսանողը և կը խանգարեն անոր առողջութիւնը. զրկանքի կեանքն ալ կ'ըսէ միանալ մշտատև աշխատութեան հետ և աւելցնել անոր տառապանքները։ Մեր աղքատ և գաւառացի ուսանողները պզտիկ թիւ մը չեն կազմեր. անոնց չքաւոր վիճակը, տնտեսական ու ընտանեկան ապիրքանութիւնը, յաճախ ծնողաղուրկ կամ ընտանեզուրկ կեանքը, անունդի և պէտքերու պակասը, դպրոցական ու տնական՝ ուսանողի և ապաստարի՝ աշխատութիւնները կ'ընկճեն, կանուխ կամ ուշ, հէք ուսանողները, որ ինչ եռանդով փարած ըլլան ուսման, ակամայ կը ստիպուին մնռնալ ամէն բան, խեա՜ղ և ապագայ. և հիւանդութիւնն ու մահը շատ չեն ուշանար՝ զանոնք, իրենց դժբախտ ղոհերը, աղջատութեան համար։

«Զափազանց աշխատութիւնն ու յոդնութիւնը, կը դրէ Ֆօլըլեան՝ իր Զոաֆֆալէ Բժշկութեան մէջ, դէշ տեսակ և կամ անբաւական անունդ, նըստուկ, գոց ու խնամած տեղերու մէջ քաշկռտուած կեանք, մեկ բառով խեղճութիւնը՝ ծիւրախտի պատիկներու զարգացման դրախտներ կը պատրաստեն, պարարտ, բեզուն, անոնց այցելութեան և զարգացման ապաւոր»։ Ու միտքս կը բերեմ մեր այն բազմաթիւ, ո՜հ, այնքան բազմաթիւ ուսանողները, որոնք Ֆօլըլեանի ցոյց տուած պայմաններէն ամբողջապէս ունին այդ հիւանդական պատիկները հիւրասիրելու համար իրենց կուրծքին տակ. բազմաթիւ են, աւա՜ղ, զրկանքի կեանքով ապրող ու տառապող ուսանողները. խղճալի է իրենց վիճակը, գաւառացիներո՛ւնը մանաւանդ. անոնք առտուները չեն ճաշեր ու իրիկուններն պանիր հացով կը շատանան, իրենց նոր սկսող կեանքը հեռու է ո՛ւ է բոլոր և դոյն ունենալէ իրենց պատանիի առոյգ հասակը և աղարծի մարմինը կը կքի ու կը մաշի՝ օտար ու դժնդակ կեանքի լուծով մը՝ խանի մը կամ հին տունի մը բորբոս պատերուն և կամ սրճարանի մը ապականուած մթնոլորտին մէջ։ Կարծես պըզտիկ դիւցազներ են, որ ապագայ յուսալի երջանկութեան մը համար՝ զրկանքի ու տառապանքի մաշեցնող ու յուսահատեցնող կեանքը կը հանդուրժեն ապրիլ. և կամ տզրուկի կոկոններ, որոնք անարև ու անբոյր կը մնան, հունա՛ր, անկիւն մը, առտու մը բացուելու, գեղեցիկ և անուշաբոյր վարդ մը ըլլալու համար. բայց . . . կը խամրին դեռ կոկոն՝ լոյս ու խնամք չվայելելով ընաւ. խորշակ մըն ալ անդիէն, ահա՛ դետինք ինկած, ոտնակոխ եղած են այդ թոշնած վարդի կոկոնները . . . ։

Մարմնամարզին չափ և մարմնամարզին պէս կարևոր է նաև առողջաբանութիւնը. մեր վարժարանները թող շրջապատին չանպին առողջաբանութեան և մարմնամարզի դասեր ալ մտցնել իրենց ծրագրին մէջ, և հարկ եղած հոգածութիւններն ու զգուշութիւնները տանին, գէթ ամէն տարը աշակերտներու առողջութեան մասին։ Աշակերտն ալ երբ առողջաբանութեան դասերով՝ տեսականապէս և բնախօսօրէն ու մարմնամարզով՝ գործնականապէս գիտնայ առողջ պահել մարմինը և կարող ըլլայ անոր տալու պահանջուած խնամքն և ուժը, պէտի կրնայ օր մը, իր նպատակին հասած, յաղթական կերպով, առաքել ուսանողական շրջանը, զոր հիմա սովորաբար շատ քիչերը կը համարձակին ու կը յաջողին բոլորել։

Վասն որ խնդիրը դպրոցական առողջապահութեան վրայ է, ըսենք նաև թէ մեր այնքան օտուար թիւով բժիշկները եթէ համձին երբեմն այցելել իրենց թաղերուն վարժարանները և բժշկական քննութեան ու խնամքի ենթարկեն այն աղքատիկ ուսանողները, որոնք նոր սկսող հիւանդութեան մը նշանները ցոյց կուտան, ինչ մեծ և գնահատելի բարիքներ ըրած չպիտի ըլլային. ժամանակ առաջ սպառնացող հիւանդութեան մը ճիրաններէն կորզել մարդասիրաբար՝ մանուկներ ու պատանիներ, դովելի ծառայութիւն մըն է. հարիւրաւոր մանուկներու և պատանիներուն ալ շնորհակալութեան և երախտագիտութեան արժանանալը՝ ամէնքան պզտիկ ու աննշան բան մը չէ սակայն. բայց մեր բժիշկները օրհնող բերան և երախտագէտ սիրտ չէ որ կը փնտռեն, այլ մի՛ միայն տուող ձեռք մը. Ահա այն դրամը այն դրամը։

14 Յուլիս 1894, Կ. Պոլիս

ՄՈՍՍ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԴՊՐՈՑ

(ՊՕԼՍԷՆ ԿԸ ԴՐԷՆ)

Այս տարի դպրոցական տարեկան քննութիւնք կարճատև ելան՝ և մրցանակաց կամ վկայագրաց բաշխումն ի ներկայութեան ծնողաց միայն կատարուեցաւ։

Սոյն պարզութեան չարժառիթն երկրաշարժի վերահաս աղետն չէր (թէև այնպէս կարծուի) այլ հետզհետէ դատարկութեան սկզբանց նկատմամբ դոյացած համոզումն՝ թէ լաւ է պարզ լինիլ և իրական, քան թէ յուզամոլ և պատրողական։ Ու արդարև՝ պէտք է որ պարզութեան առաջին օրինակն ըլլան դպրոցներն լինին։ Հանդէսներու մէջ ի ցոյց կը դրուին ինչ որ հազիւ չորս կամ հինգ թերի է դպրոցի մէջ։ Ուսուցիչներու

դրածն իբրև աշակերտի կամ աշակերտուհւոյ չտրագրած ներկայացնել, սեթևեթել, պաճուճել ինչ որ անկենդան է, այսպիսի աչքակապութիւնն՝ անրարչտութիւն է դաստիարակութեան ճշմարիտ հոգւոյն և ուղղութեան դէմ։ Պէտք է ուրախանալ, որ աչքակապութիւններն կը կորուսանեն իրենց նոտի հրապոյրն։ Երանի՛ թէ դէմ այսուհետև ծագէր, ճառագայթէր ճշմարիտ դաստիարակութեան և կրթութեան արշալոյսն և կենդանարար լուսով պարարէր մանկանց հոգւոց և մտաւոր տեսութիւն, որոնք չատ անգամ կը պատրուին և չրջմոլիկ հնչոյն եռևէն վազելով իրենք ևս չրջմոլիկ իմաստակներ կը լինին և ոչ թէ ճշմարիտ լուսով լուսաւորուած բարի, բանիբէտ և օգտակար անդամներ հասարակութեան։

Սոյն նկատողութիւններէն ինքնին կը հետևի թէ Ֆրէօպէլեան կրճէ և Քարոյականէ ուսուցմն պէտք է որ ոչ միայն դպրոցներու ծրագրին մէջ գտնուի, այլ աւանդուի արդիւնաւոր կերպիւ — Ֆրէօպէլեան ասմունք յատուկ եղանակաւ։ Թուաբանութիւնն սերտել, թուաբանութիւնն պատասխանել, առանց հասկնալու, առանց զգալու, սեւելի վատ է քան թէ բնաւ չուսանիլ։ Այդ մի պոռնկաբերդ է, ուր միայն առասպելներն ու չրթունքն կը զործեն և ոչ թէ սիրտն ու միտքն։ Բայց քրիստոնէական ճշմարտութիւնն ու բարոյականն լուկ մի ձև կամ դաղափար չէ զոր պէտք է ուսանիլ, ճանաչել, այլ մի կենդարար օդ, զոր պէտք է շնչել, մի օրինակ, որուն պէտք է հետևիլ, մի հոգի որով պէտք է ոգևորիլ։

Կրօնի և բարոյականի ուսուցմն տարափոխիկ է։ Երբ ուսուցիչն առաքինի է, ճշմարտութեան սիրով վառուած է և քրիստոնէական հաւատոյ, յուսոյ և սիրոյ պրաններով պրահատուրուած, իր սոյն կեանքն է ահա՛ որ կը վոխանցի աշակերտներուն։ Ուշադրութիւն չը դարձնել կրօնի և բարոյականի ուսմանվրայ՝ կը նշանակէ իսպառ անդէտ լինիլ դաստիարակութեան նպատակին, որ է մարդն բարձրացնել, աղնուացնել, կատարելագործել։

Արդէն նիւթապաշտութեան ոգին օր աւուր կը խորխոտայ տիրապետել, ի՞նչ զօրութեամբ կարելի է ուրեմն դիմագրաւել եթէ ոչ կրօնի և բարոյականի հիմնաւոր ուսմամբ։

Ի՜նչքան քաղցր է, երբ մարդ մանկութենէն կ'ուսանի և կ'ըզգայ, որ ունի հոգևոր կեանք, մարմնաւորէն և նիւթականէն չատ բարձր կեանք։ Ի՜նչքան քաղցր է, երբ ծաղիկ հասակէն իսկ

հաստատ համոզումն կը կազմէ թէ նիւթն է որ պիտի խորտրհի և հոգին է որ պիտի իյնէ, մանաւանդ երբ օրինակաւ ևս կը տեսնէ որ իւր ուսուցիչներն, իւր առաջնորդներն կենդանի օրինակ են հոգեկան բարձրութեան։

Անհնարին է պատմել այն ուրախութիւնն զոր մի ամիս առաջ զգացինք Մեզպուրեան վարժարանի օրիորդաց կրօնական և բարոյական՝ ուսմանց քննութեան օրն։ Մեծավաստակ Մեզպուրեան էֆէնտի և իւր համեստափայլ դուստրն՝ Օրիորդ Մաքրուհի, իրենց ամէն բաժնած էին կրօնագիտութեան և բարոյագիտութեան դասերն։ Ազնիւ Օրիորդն աւանդած էր ստորին կարգերու Ս. Աւետարանի առակներն և Նոր Կտակարանի պատմութիւնն, զոր իւր աշակերտուհիներն կը պատմէին, կը բացատրէին հասկնալով և հասկուցնելով. ամեն հարցման կը պատասխանէին ուրախ, պուարթ, և բոլոր ունկնդրաց սիրտն ցնծութեամբ կը պարարէին։ Մեզպուրեան էֆ. բարձրագոյն կարգերուն աւանդած էր բարոյագիտութեան և Եկեղեցական Պատմութեան դասեր։ Աշակերտուհիք այնքան հասուն կերպիւ պատրաստուած էին, այնքան իսկապէս իւրացուցած էին իրենց դասերն, որ գոգցես կը դասախօսէին քան թէ կը պատասխանէին։ Ամեն ունկնդիրք, որոց մէջ կային եկեղեցականք ևս, խորին մտադրութեամբ և զմայլմամբ կը լսէին թէ՝ ինչպէս մատաղատի օրիորդներն կը բացատրէին քրիստոնէական բարոյականի սկզբունքներն և ինչպէս պեղեցիկ կը պատկերացնէին Քրիստոնէական Եկեղեցւոյ հաստատութեամբ, հալածանաց և չարչարանաց պատմութիւններն։

Որչա՜փ անկարգութիւններ և ստահակութիւններ իսպառ պիտի հալածուէին դպրոցներէն եթէ օրինաւոր կերպիւ աւանդուէին կրօնի և բարոյականի ուսումներն։

Արդեօք այս չէ գլխաւոր պատճառն որ Մեզպուրեան վարժարանն աւելի ընտանեկան կենաց պեղեցիկ կերպարան ունի քան թէ բազմաշխուկ և բազմաղղրդ յարկի, զոր շատ անգամ մարդ կը չիկնի պղծոց անուանել։

ՄԵՐ ԳԱԻԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ք

Ժողովուրդը չատ հետաքրքիր է իմանալ մեր երեսփոխանական և վարչային մարմիններուն արարքը։ Այս հետաքրքրութիւնը, թէև ծանրահաս, թերևս արդիւնք մ՚արտադրէ և նիւթական ու բարոյական աննախանձելի կացութեան մը դարման մը բերելու դրգիռ լինի։

Արդէն առաջին յօդուածով մը նկարագրած էի մեր Գաւառական ժողովին վիճակն և ըրած ձախող մի որոշման վրայ ֆազ. ժողովի Ատենապետ՝ Սպարդալեան Ստեփան էֆ-ի և Տընտեսական Խորհրդոյ պաշտօնէ Հրաժարիլն։

Արդ՝ պատմութեանս թելը մեր առնելով՝ պարտիմ չարունակել։ Հին հրաժարականներուն կ՚յաջորդէ և ֆազ. ժողովին միւս վեց անդամներու նոր հրաժարագիրն առ Գաւառական դիւանն, այնպէս որ Առաջնորդարան, հիւանդանոց, վարժարան, և ամեն ազգային գործ, արդէն դրամական տագնապի մէջ, բոլորովին քաքայման մատնուելու կ՚սպառնան։

Այս տխուր վիճակին դարմանն ու պատասխանատուութիւնն կ՚ձնային Գաւառական ժողովին վրայ, որ ներկայ ամսոյս 13 ին նիստ կ՚կազմէ՝ կարգ խնդրոյ ունենալով — ա) Մեծաշուք Կարապետ էֆ. Արապեանի կողմէ Աբհեպոռնոյէ առաջարկն, բ) ֆազ. ժողովէն հրաժարեալներն։ Գուան երեսփոխաններ ներկայ կը գտնուին։ Ատեանը կ՚բացուի նախագահութեամբ Առաջնորդական փոխանորդ Արժ. Տ. Յովհ. քահանայի և Ատենապետութեամբ Մեծ. Ղուկաս էֆ. Եսայեանի։

Առաջին խնդիրն ոչ վիճարանութեան և ոչ նկատողութեան կարօտ էր լուծուելու համար, այլ պարզապէս սրտագին երախտագիտութեան՝ առ վեհանձն բարերարն Արապեան, որ իր ծախիւք ղպալի և օգտաշատ պէտք մը ընծայ կ՚առաջարկէր՝ այնպիսի բանաւոր պայմաններով զոր ժողովը միահամուռ կ՚ընդունի՝ չնորհակալեայ քուէով և հիւնարկութեան ձեռնարկելու համար բարձրագոյն հրամանագիրը ստանալու մէջտեղ կ՚անօրինէ։

Ապա կ՚կարդացուի ֆազ. ժողովոյ վեց անդամներու հաւաքական հրաժարագիրն, որ իր պարզութեամբը կ՚փայլի։ Ո՛չ

պատճառ ցոյց կ'տայ և ոչ դարման։ Երեսփոխան մը (Մ ։Մա-մուրեան) կ'խնդրէ դիւանէն որ Սպարդապետեան էջիէնտիի հրա-ժարագիրն ալ կարդացուի, քանի որ խնդիրն Քաղ. ժողովի հրա-ծչականին վրայ է։ Այդ ընթերցումը կ'մերժուի Ատենապետին կողմէ առարկութեամբ որ խնդրոյ կարգին պատ է։ Առարկութիւնը թէև անհեթեթ, լուսնեամբ կ'ընդունուի ժողովէն, դիտող երեսփոխանին օրինաւոր դիտումներուն և, վերջապէս ճարա-հատ, հրաժարագրի ընթերցման խնդիրն քուէի դնելու առա-ջարկին իսկ հակառակ, մինչ նոյն պահուն, խնդիրը թաղելու համար, Դիւանն և այլ երեսփոխան մը Ս. Առաքնորդի և Վար-չութեան մէջ եղած բանակցութեան վրայ մանաւոր խօսակ-ցութիւն մը կ'սկսին։ Ահա այն ատեն կ'սկսի նաև երկուստէք վիճաբանութիւն մ'որով մէկ կողմէ կ'խնդրուի Գաւառականին ներկայել Ս. Առաքնորդի հետ եղած բանակցութեանց արդիւն-քը, և ֆպղնէ+ լսելը, միւս, այս է՝ Ատենապետին կողմէ՝ ծանր մեղադրանք դիտող երեսփոխանին դէմ, յայտարարե-լով թէ Դիւանն բնաւ գաղտնիք չունի, չունի և իր տրամա-դրութեան ներքև ո և է ֆաքտ և պեղկոնի՝ այդ բանակցու-թեան մասին, հետևապէս Մ. Մամուրեան պարտի խօսքը ետ առնել։ Եւ յետոյ կոչման խնդիրն քուէի կ'դրուի, անպատաս-խանի մնալով ժողովին կողմէ։ Սակայն ոչ յետոյ կոչման և ոչ քուէի հարկ կար, քանի որ նոյն Դիւանը պահ մ'ետքը՝ հեռագիր և նամակ մի առ մի կ'կարդայ և Գ. ժողովը կ'իմանայ որ Ս. Առաքնորդն վարչութեան կողմէ յղուած հեռագրական հրաւէ-րին նոյն միջոցաւ կ'պատասխանէ թէ՝ ապացոյց ցնծագոնայ, կ'իմանայ նաև որ երկար գրով մը Վարչութիւնն իրաց ողբալի վիճակը կ'հաղորդէ առ Ս. Առաքնորդն և կ'սպառնայ հրաժարիլ եթէ նա չուտով աթոռը չդառնայ՝ բոլոր պատասխանատուու-թիւնն անոր վրայ թողլով։

Այնուհետև խօսք կ'առնէ ժողովին կիլերոնն (Թոմայեան էֆ.) և կըսէ թէ՝ ընտանեկան գործեր են անդրադ Ս. Առաք-նորդին յատուկտան պատճառ, թէ իրրև հանդոյնէ ? պաշտօնեայ ինք արդէն ուսումնասիրած է Ս. Առաքնորդին բնաւորութիւնն ու ընթացքը, թէ վարչային գործերու և եկմատոյցին բացին վրայ ողբալու պէտք չկայ, թէ եկեղեցականի մ'եռանդն վազելու օրե-րըն անցած են, թէ ամեն բան կարելի է կարգի դնել, թէ հի-մակ որ եկմատոյցի մասնախառնին, որու մի անդամն է, հրաժա-րած է, ծնտես, խորհուրդը կրնայ չարունակել իր պաշտօնը, ինչ-

պէս և Ֆաղ· Ժողովին, որու վրայ մեծ վարհամբոյր ունի, թէ՝ ինքը՝ ըն իր ընկերներովը պատրաստ է միշտ՝ երբ Վարչո թիւնն նեղը մանէ, օգնութեան հասնիլ և յօգուտ հասարակութեան անձնուիրաբար ծառայել, և թէ՝ վերջապէս, պէտք է հրաւիրել հրաժարողներն իրենց գործին գլուխն անցնելու։

Որոշում — Գրել Ֆաղ· Ժողովի անդամոց նոյնպէս Տնտեսականին և Սպարապետեան էֆ·ին որ Ժողովը չընդունիր իրենց հրաժարականն և խնդրել որ անձնուիրաբար շարունակեն իրենց պաշտօնն։

Եզրակացութիւն — Գ· Ժողովին առաջին սխալն եղաւ, իր Գ· Նստին մէջ ելլդական մասնախումբ մը ընտրելն, ընտրութիւն՝ որ Ֆաղ· Ժողովն ու Տնտեսական Խորհուրդը ցրուեց։

Երկրորդ սխալն եղաւ, առանց Ֆաղ· Ժողովի Ատենապետ՝ Սպարապետեան էֆէնտիին հրաժարագրին ընթերցման, հրաւիրագիր ուղղելն անոր որ պաշտօնը ստանձնէ, գործ մ'որ կ'նմանի հիւանդի մը դեղ տալ առանց թողլու որ հիւանդն իր ցաւն յառնէ։

Եւ ի՞նչու այսպէս,

Ահա Գ· Ժողովին Ե· Նիստը, որ ամսոյս 18ին տեղի ունեցաւ պիտի յայտնէ։ Այս անդամ Առաջնորդէ հրաժաբաէրէ հետ կ'երևի Ազնուաչուք Աթենագէորէն հրաժաբաէրէն խնդրոց կարգին մէջէ Առաջինը կը հրաժարի, վասն զի չէ կրցած գոհացնել հայ հասարակութեան պահանջներն և համելի լինիլ ոմանց։ Ուստի անդառնալի լինելու պայմանաւ՝ կ'իջնէ Առաջնորդական Աթոռէն՝ արժանաւորագոյնին թողլով զայն։

Գ· Ժողովը մերժելով հանդերձ Ս· Առաջնորդին հրաժարագիրն կ'որոշէ խնդրել որ իր հրաժարման պատճառներն բացորոշ հաղորդէ Գ· Ժողովի Դիւանին։

Երկրորդ հրաժարագիրն չատ աւելի ծանրակչիռ կ'թուի, և կերպով մը կ'բացատրէ նաև Ս· Առաջնորդին հրաժարման պատճառն։ Ֆաղ· Ժողովին Ատենապետն զառնապէս կ'դանդատի Թոմայեան և Ձերմակեան երեսփոխաններու դէմ՝ որ ծանրապէս թշնամանած, անուանարկած են՝ Տնտեսական Խորհրդոյ առջև՝ բոլոր վարչային մարմինն, Առաջնորդարանի պաշտօնեաներն և նոյն իսկ Ս· Առաջնորդն, և մի առ մի թուելով անոնց ապօրէն արարքն, կ'յայտարարէ թէ անհնար է իրեն համար գործակից դտնուիլ այնպիսի անձերու հետ որ մինակ կրնայ կ'ծառայեն և չէ թէ հասարակաց օդտին։

Թոմայեան էֆ. բոլոր ուժովը կ'բողոքէ այդ հրաժարագրի դէմ, զոր ամբաստանագիր կ'անուանէ, պնդելով որ երբէք չէ ըսած իրեն վերագրուած խօսքերն, և դատաստան կ'խնդրէ։ Գ. ժողովը մասնախումբ մը կ'ընտրէ, որպէս զի եղած ամբաստանութեանց կէտերը քննէ և տեղեկագիր մը ներկայէ։

Այս մասնախումբին անդամներն են՝ Կ. Աբապեան, Կ. Սէրճոյեան, Ց. Շահինեան էֆէնտիներն։

Արդ՝ կ'մնայ մեզ տեսնել թէ ի՞նչ արդիւնք պիտի ունենայ այդ Մասնախումբն, որ բաւական միամիտ պաշտօն մը ստանձնելու կոչուած է, եթէ երբէք ստանձնէ, և թէ ի՞նչ վճիռ պիտի տայ Գ. ժողովը որ չատ ծանր պատասխանատուութեան ներքև ճնշուած կ'մնայ։

Վ.

ԼՐԱԲԵՐ

Երկրաշարժին ցնցումներէն ետև՝ մարդկային չարժումն։ Ահաւոր աղէտին դէմ ազդեցի՛ և զօրաւոր դարմաններ կ'սկըսին։ Օրագրներն հետզհետէ մօտէն քննելով՝ կ'նկարագրեն չարժին բերած աւերումներն, վնասներն և թշուառութիւնն, մարդասէրներ կոչում կ'ընեն վեհանձն հոգիներու և օգնութիւն կ'հայցեն ի նպաստ անտուն և անտերունչ արկածելոց։ Եւ արդէն ոչ միայն Կ. Պոլսոյ մէջ այլ և Եւրոպայի զանազան կողմեր հանգանակութիւններու կ'ձեռնարկեն և կարևոր գումարներ կ'ստորագրուին։ Մեր վեհափառ Սուլթանն՝ իր պատուատ և ողորմասեր հոգւոյն բերմամբ՝ կ'ընծայէ արքայավայել գումարներ, նախարարներ և սեղանաւորներ, վաճառականներ և ունևորներ կ'մասնակցին այս մարդասիրական գործին։ Լոնտոնի, Բարիզ և այլ մայրաքաղաքներ օգնութեան ձեռք կ'կարկառեն և արդէն պատկառելի գումար մը Եկեղեցական յանձնախումբին տրամադրութեան ներքև կ'գտնուի, գումար՝ որ անշուշտ հետզհետէ պիտի ստուարանայ և գէթ մասամբ ծանր աղէտից դարման պիտի բերէ։ Այնպէս կ'երևի որ բնութիւնն հանդիստ չպիտի տայ մարդկային կենաց, որու կ'սպառնայ վերստին հնամաղն։ Չտ համաբարկն հասած է մինչև Էտիրնէ, և արդէն կ'ճարակի սաստիկ Բեղրգպուրգ, Աւստրիա, և այլ Եւրոպական երկիրներ։ Օսմանեան կառավարութիւնն ամեն զգու-

չական միջոցներ ձեռք կ'առնու որ տարածումն արգիլէ։ Այս բնահաս աղէտից՝ կրիչ և հակառակութեանց աղէտքն ալ կ'աւելնայ, այս է պատերազմ, որ արդէն սկսած է Ճարոնի և Չինու մէջ՝ Ռուսիայի առթիւ։ Եւրոպական մի քանի տէրութեանց խաղաղասիրական միջամտութիւնը կ'մերժուի Ճարոնի կողմէ՝ որ թէև ոչ այնքան զօրաւոր քան հակառակորդն, ունի ճարտար, աչխոյժ ժողովուրդ, և գործօն նաւատորմ, որ զգալի վնաս կ'հասցունէ Երկնային Պետութեան։ Ցրանսա տարբեր չարեաց առաջն առնելու, ընկերային պատուհասներ զսպելու պէտքն կ'զգայ և՝ երկար միմարանութենէ ետք՝ իր ազգային ժողովն կ'ընդունի այս նպատակաւ յօրինուած ծրագիրն, մինչդեռ Անգլիոյ լրտերու ժողովին մէջ այս մասը եղած փորձն ապարդիւն կ'մնայ։ Սակայն կառավարութիւնն ընկերային խընդիրներու վերաբերեալ մի չատ ծրագիրներ Բարլմէնդի այս և յաջորդ նստաշրջանին ներկայելու կ'պատրաստուի, բոլորն յօգուտ ժողովրդեան, այնպէս որ լրտ Ռոզպէրիի պաշտօնէութիւնն օրէ օր զօրանալու կ'նկրտի։ Արդէն կ'քուէարկուի այն ծրագիրն որ կ'վերահաստատէ իրենց արտերուն և տուներուն մէջ արտաքսեալ Իրլանտացի վարձկալներ, ինչպէս որ հաւանական է թէ մօտերս քուէարկուին նաև այն օրինագծերն որով Սկովտիոյ մէջ տեղային կառավարութեան կարևոր դրութիւնն և ընդհանուր տրոց հաւասարութիւն պիտի հաստատուին։ Իտալիա հետզհետէ կ'յարի իր ճարտարամիտ վարչապետին, որու ձեռօք կ'յուսայ ապահով մի չատ ընկերային և ելմտական կընճռոտ խնդիրներէն։ Իտալական զօրաց ձեռօք Սուտանի Փաստլա քաղքին գրաւումն նոր այժ կ'բերէ արդի պաշտօնէութեան և ընդհանուր խնդութեան պատճառ կ'լինի։ Պուլկարիա կուսակցական վէճեր, Սդանպուլովի հրաժարման հետևանօք՝ կ'շարունակուին և ժողովուրդն յուզման մէջ կ'գտնուի։ Միացեալ-Նահանգաց Նախագահն՝ Պ. Ֆիլվէնտ՝ իր խոստման հաւատարիմ՝ կ'պնդէ՝ Մերակոյսի ընդդիմութեան հակառակ, մաքսային տրոց պեղչման վրայ, իսկ Մորմոնաց երկիրն՝ երբեմն անկախ, նուիթահ՝ Ամերիկեան նահանգաց կարգը կ'անցնի՝ հրաժարելով իր ամուսնական ծանօթ դրութենէ։

ՄԻԱՄԵԱՅ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՈԴԱՏԱՐ-ՈՐԲԱՀԱՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1893 Ապրիլ 1 — 1894 Մարտ 31

Հոդատար-Որբահանամ Ընկերութեան Ընդհ. ժողովը ի նկատի առնելով Ազնիւ Տնօրէն Խորհրդոյ հետագայ համարատուութեան Միամեայ Տեղեկագրէն՝ պարտ համարեց յայտնել իւր սրտագին գոհունակութիւնն, որով կը դնահատէ Ազնիւ Տ. Խորհրդոյ աշխատասիրութիւնն ու անդուլ չանքն իւր պաշտօնին անթերի կատարման մասին, և որոշեց հրապարակաւ մատուցանել իւր ջերմագին շնորհակալիքն այն ամեն ողորմասէր աղնուամիտ և կրթասէր անձանց որք Ընկերութեանս նպատակին գործադրութեան ազակցեցան միշտ բարոյապէս և նիւթապէս և սոյն Տեղեկագրէն հրատարակել ի գիտութիւն լարբեսեր Հայ հասարակութեան։

Զմիւռնիա 1 Ապրիլ 1894

Ի Դիմաց Ընդհանուր ժողովոյ
Ատենապետ ՕՐ. ԹԱԳՈՒՀԻ ՏԱՄԿԱՃԵԱՆ
Ատենադպիր ՏՆ. ՍՐԲՈՒՀԻ Պ. ՏԻԼՊԵՐԵԱՆ

Աղնուափայլ

Ատենապետ Ընդհ. ժողովոյ Հոդատար-Որբահանամ Ընկերութեան

Հոդատար-Որբահանամ Ընկերութեանս Տնօրէն Խորհուրդը դոհութեամբ սրտի կը ներկայէ ձեզ այսօր իւր միամեայ պաշտօնավարութեան Տեղեկագիրը, յայտնելով որ սոյն չրջանին, որչափ կարճ նայնքան արդիւնաւոր և պատուարեր եղաւ Ընկերութեանս համար։

Արդէն յայտնի է Պատ. Ժողովրդ. որ սկսեալ երկու ընկերութեանց միաւորութենէն՝ որ տեղի ունեցաւ 1893 Յունվար 1ին, Ընկերութեանս միակ ջանքն եղաւ՝ իւր նպատակի իրագործման միջոցներն փոխել ի գործ դնել։ Ընկերութեանս դիտաւորութիւնն որչափ որ դիւրութիւնք որոնց մը հիմնել էր, բայց իւր նիւթական անձուկ վիճակին բերմամբ առ այժմ հարկ դատեց միայն ցերեկեայ վարժատուն մը բանալ, հոգալով որբուհեաց գրական պիտոյքն, դպեստեղէններն, ցերեկեայ ճաշն և մերթ նախընթերակն ալ։ Երբ Ընկերութեանս նիւթական վիճակն հետզհետէ բարւոքի, անշուշտ Ընկերութիւնս չպիտի վարանի իւր հաստատութիւնն դիւրութիւնք որոնցով վերածել. վասն զի այսու միայն պիտի կրնայ արդիւնաւորել իւր նպատակն, որ՝ ազգային բարեկիրթ, ուսեալ և ժրաջան օրիորդներ պատրաստել։

Ընկերութիւնս դեռ իւր առաջին քայլափոխին չաւարած մըներս, տեսնելով կարօտ և անտէրունչ որբերու չաւութիւնն քաղքիս մէջ, որոյ հաւասարապէս խնամ տանել թէև իւր պարտքն էր, բայց իւր պիւտճէին համեստ վիճակն ներելի ըրաւ իրեն՝ միայն 12 որբուհիներ ընտրել յետին ծայր չքաւոր դասակարգէն։ Իսկ տարւոյն ընթացքին մէջ անդրաժեշտ հարկի առջև չկրնալով անտարբեր մնալ, այդ թուոյն վրայ աւելցուց 2 որբուհիներու անուններն ալ, որով այժմ Որբանոցիս մէջ պատսպարելոց թիւն է 14, որոց փոքրագոյնը 6 և մեծագոյնը 11 տարեկան։ Ի հարկէ իւր նիւթական կարողութեան սահմանաւորեամբ՝ այս թիւն ևս պիտի աւելնայ հետզհետէ, եթէ արդոյ հասարակութիւնն չարունակէ Ընկերութեանս նպաստել իւր ծանօթ ողորմասիրութեամբ։

Ընկերութեանս կարողութիւնը դեռ չներելով առանձին չէնք մը վարձել իւր որբուհեաց պատսպարման համար, Հայ Ընթերցասէր Տիկնոջ Խորհրդոյ հետ միանալով՝ վարձեց Ա. Գր. կալուածներէն Մօտա փողոց թիւ 1 տունը, կէս առ կէս վճարելով տարեկան վարձագինը։

Արդարև մեծամեծ դժուարութեանց պիտի բախէր Ընկերութիւնս իւր նպատակի իրագործման մասին՝ եթէ գիտասիրտ և բարեպաշտ անձինք, որոց անուններն երախտագիտութեամբ կը յիշատակուին տեղեկագրոյս վերջը, չիւթային օգնութեան ձեռն կարկառել մեզ՝ փոխն ի փոխ հոգալով որբուհեաց կերակրոյ պէտքերն։ Բաց ասած, Մեծ. Մ. Ալճնաւորեան առաջինն ըլլալով Ընկերութեանս որբուհիներէն մին որդեգրեց՝ ինքնին հոգալով նորա տարեկան ծախքն։ Յուսալի է որ սոյն ազնիւ գործն խրախոյս պիտի կարդայ այլոց ևս՝ նորա օրինակին հետևելու։

Թէև Համեստաւիսալ Օր. Ափիւ Ալթունեան չնչին գումարի մը փոխարէն յանձնառու եղաւ մնայուն վարժուհւոյ և դաստուի պաշտօնն վարել՝ Ընկերութեանս համակրանաց արժա-

նանալով իւր բարի վարուք և գովանի աշխատութեամբ, բայց 14 սանուհեաց ուսման և ձեռագործի պէտքերն լիովին հոգալու համար օժանդակ դասատուներու պէտք լինելով, գոհ ենք յայտնել թէ Ընկերութեանս Անդամուհի Օրիորդներէն շատեր, որք Ս. Հոգւոյս վարժարանի նախկին ընթացասարտներէն են, յօժարակամ յանձնառու եղան ուսմանց առարկաներն անձնուիրաբար իրենց մէջ բաժնել և այսպէս Ընկերութեանս բեռը թեթևցընել։

Ընկերութեանս Որբանոցին մէջ մանկավարժական դիւրութեամբ եղանակաւ կ'աւանդուին առ այժմ Հայերէն, Ֆրանսերէն, կրօն, Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Թուաբանութիւն, Իրաբանութիւն, Վայելչագրութիւն, Գծագրութիւն, Ասեղնագործութիւն և կարուձևի սկզբունք։ Ասոնք ժամանակացոյցի մէջ նշանակեալ օրերուն և ժամերուն անվրէպ կը դասախօսուին սանուհեաց։

Ուրախ ենք ներկայիս յայտարարել թէ Ընկերութիւնս, ի սկզբանէ իւր հաստատութեան՝ միշտ բարեսիրտ Ազգայնոց կողմանէ համակրանաց, գուրգուրանաց և քաջալերութեան արժանացաւ։ Այս կարգի անձանց մէջ նշանաւորագոյն հանդիսացած էր մանաւանդ ողբացեալ Տիկին Մարիամ Թևեան, որոյ տարաժամ մահն զգալի պակաս մը թողուց Ընկերութեանս գործունեայ անդամուհեաց շարքին մէջ։ Ոչ նուազ չնորհակալեաց արժանի է նաև քաղքիս Ս. Առաջնորդն, որ ամեն պարագայի մէջ փութաց իւր նիւթական և բարոյական աջակցութեամբ խրախուսել զմեզ։

Վերջացնելով մեր Տեղեկագիրն, ապագայի յոյսերով առլի' կ'թևակոխենք մեր երկրորդ շրջանը, տալուինելով երկնից օժանդակութեան և վստահելով բարեսէր Ազգայնոց քաջալերութեան, որք ապահով ենք թէ չսիրտ զանան յառաջիկային ևս նուիրել իրենց նպաստներն ի խնամս և ի յառաջդիմութիւն Որբուհեաց։

ՏՆՕՐԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՀՈԳԱՏԱՐ - ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ատենապետ	Տ՝	ՎԱՐԴՈՒՀԻ Գ· ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
Փոխ Ատենապետ	Օր·	ՄԱՐԻ Ս· ՍԻՄՈՆԵԱՆ
Ատենադպիր	»	ԵՊՐԱՔՍԻ ՄԿՐՏԻՉԵԱՆ
Գանձապետ	»	ԳՐԻՍՏԻՆԷ ԹԵԻԵԱՆ
Հաշուակալ	»	ԻՍԿՈՒՀԻ Յ· ԹՕԳԱԼԵԱՆ
	»	ՄԱՐԹԱ Ա· ՊԵՐԿԱՄԱԼԵԱՆ
	»	ԷՅՏԻԿ Ա· ՄԵԼԻՔԵԱՆ

ԱՆՈՒԱՆԳ ՏԱՐԵԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԱԾ

Գեր.	Ա.ա.ջնորդ Ս. Հայր	396	
Տիկին	Բօլին Ս. Սպարդալեան	312	
»	Գալինիկ Ա., կամաբարկան	178	
»	Գայեանէ Յ. Տիլպերեան	178	
Պրն.	Գրիգոր Զիլինկիրեան	178	
Օր.	Եղինէ Պ. Աւադեան	156	
Տն.	Զարուհի Տ. Աչեան	178	
»	Զապէլ Մ. Հալէպլեան	66	
»	Զապէլ Ա. Զիլինկիրեան	178	
»	Էվանդիա Պ. Կոստանեան	156	
»	Էլիզ Պ. Պերկամալեան	66	
»	Թագուհի Լ. Մկրտիչեան	178	
»	Թագուհի Ա. Տիվրիկեան	99	
»	Խոլուհի Ս. Թագուորեան	198	
Օր.	Իւրսիլ Թագէսեան	99	
Տն.	Կիւլա Կ. Զաքեան	66	
»	Հռիփսիմէ Գ. Կոստանեան	310	
Օր.	Հռիփսիմէ Պաքրճեան	99	
Տն.	Մատլէն Ղ. Եսայեան	178	
»	Մարթա Թ. Համբարձումեան	78	
»	Մարիամ Ն. Հարէնց	24	75
»	Մարթա Դ. Մարկոսօֆ	178	
Օր.	Մարինա Պ. Պաքրճեան	99	
Տն.	Մարիամ Կ. Սիւքիասեան	178	
Պրն.	Միհրան Մ. Աղնաւուրեան	534	
»	Միհրան Ս. Իփլիքճեան	156	
»	Յարութիւն Սիվրիսարեան	66	
»	Յովհաննէս Տէր Միրաքեան	33	
»	Յարութիւն Փոլյումճեան	178	
Տն.	Ոմն	24	75
»	Պարծանք Գ. Սուլթանեան	178	
Պրն.	Սահակ Ա.ետիքեան	198	
Օր.	Սրբուհի Ս. Ճերմակեան	24	75
Պրն.	Սարգիս Միրճանեան	99	

Պրն.	Ստեփան Յ. Քույումճեան	178	
Տն.	Սրբուհի Յ. Սպարդալեան	178	
»	Սօֆի Թ. Սպարդալեան	356	
»	Վառվառէ Ս. Իփլիքճեան	99	
Պրն.	Տիգրան Աղաջարեան	55	
Տն.	Տիգրանուհի Ս. Կոստանեան	178	
»	Տուտու Ա. Կոստանեան	66	
Պրն,	Տիգրան Զիլինկիրեան	178	
Տն.	Ֆուլեանէ Եուսուֆեան	356	
		6940	25

ԱՆՈՒԱՆՔ ՊԱՏԱՀԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ

Տն.	Ագապի Մ. Գազազեան	178	
Պրն.	Աստուր Գուչատալեան	82	50
»	Առաքէլ Շաքլեան	66	
»	Գէորգ Աղաբէկեան	44	50
Օր.	Հռիփսիմէ Գաւթեան	16	50
Պրն.	Մինրան Աֆէչեան	588	
»	Մինրան Զամպազճեան	89	
»	Յարութիւն Բարադամեան	66	
»	Յակոբ Գալէնտէրեան	178	
»	Ոմն	55	
Տն.	Ոմն	66	
Օր.	Քրիստինէ Գալուեան	178	
		1585	50

ԱՆՈՒԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴ ԱՆԴԱՄՈՒՀԱՑ

Օր.	Աղաւնի Յ. Քույումճեան	99
»	Եւքարիս Գ. Սըվազլեան	99
»	Զարուհի Վարպետեան	178
»	Էլիզ Յ. Աղազարեան	99
»	Էֆթիկ Ա. Մէլիքեան	99
Տն.	Թագուհի Կ. Յակոբեան	178
Օր.	Թագուհի Յ. Յովսէփեան	99
»	Թագուհի Տամլամեան	178

Տն.	Մարի Ց. Ասլանեան	99
Օր.	Մարթա Ա. Պերկամալեան	99
»	Մարի Ս. Սիմոնեան	99
Տն.	Յուստիանէ Զ. Տիլպէրեան	178
Օր.	Նոյեմզար Մ. Ուննեան	99
Տն.	Նեկտար Ս. Միվթիսարեան	178
Օր.	Ոսկի Ս. Պալապանեան	99
»	Սաթինիկ Ց. Հալեպլեան	99
Տն.	Սրբուհի Պ. Տիլպէրեան	178
»	Վարդուհի Գ. Զիլինկիրեան	178
»	Տալիդա Ց. Ալէօնեան	178
»	Տուտու Ս. Մարկոսեան	178
»	Տուտու Գ. Սըվալլեան	178
Օր.	Ֆրիսթինէ Մ. Թևեան	178
»	Ֆայրք Ց. Թոզաթլեան	99
»	Ֆօրթիւնէ Ոսկանեան	99
		3245

ՇԱՒԱՓԸ ՄԷԿ ԱՆԳԱՄ ԿԵՐԱԿՈՒՐ ԴՐԱՊՆԵՐ

Տն.	Ագապի Կ. Աբապեան
»	Սօֆի Թ. Սպարդալեան

ԱՄԻՍԸ ՄԷԿ ԱՆԳԱՄ ԿԵՐԱԿՈՒՐ ԴՐԱՊՆԵՐ

Գեր.	Առաջնորդ Ս. Հայր
Տն.	Զապէլ Ա. Զիլինկիրեան
»	Զէնոբի Ց. Քույումճեան
»	Թագուհի Լ. Մկրտիչեան
»	Թագուհի Կ. Յակոբեան
»	Թագուհի Ն. Պաքրճեան
»	Իսկուհի Ա. Թագւորեան
»	Լուսի Յ. Ալթիպարեան
»	Հռիփսիմէ Պ. Պաքրճեան
»	Հռիփսիմէ Ս. Սիմոնեան
»	Մարիամ Մ. Թևեան
»	Շուշան Ց. Յովսէփեան

Պրն.	Պօղոս Պերկամալեան
Տն.	Վահան Ս. Իլիքճեան
»	Վիրգինէ Ա. Ճելէպեան
»	Վարդուհի Գ. Զիլինկիրեան
»	Տիգրանուհի Ճէվայիրճեան
»	Տաւտու Գ. Սըվաղլեան

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԿԵՐԱԿՈՒՐ ՂՐԿՈՂՆԵՐ

Տն.	Բերսաբէ Գ. Սիվրիսարեան	1	անգամ
»	Էլիզա Մ. Մերկիրեան	2	»
»	Կատինա Ա. Մէլիքեան	4	»
»	Մարիամ Ա. Կարապետեան	2	»
»	Մարթա Շէրիմճեան	1	»
»	Մարեամ Յ. Շէրիմճեան	1	»
Պրն.	Յարութիւն Գալէնտէրեան	1	»
Տն.	Սրբուհի Պ. Տիլսըրեան	4	»
»	Տաւտու Սիվրիսարեան	4	»
»	Տիգրանուհի Վարպետեան	4	»

ՈՒՏԵԼԻՔ, ՀԱՆԴԵՐՁԵՂԷՆ ԵՒ ԱՑԼՆ ԻՐԵՐ ՂՐԿՈՂՆԵՐ

Պրն.	Աւետիս Քէօլէեան	Հաց	10	Օխայ
»	Դանիէլ Զուխամի	»	12	»
Օր.	Զարուհի Վարպետեան	»	10	»
Տն.	Իսկուհի Մ. Մաճրեան	»	2	»
Պրն.	Կիրակոս Էքիզեան	»	10	»
Տն.	Հռիփսիմէ Յակոբեան	»	6	»
Պրն.	Մովսէս Թևեան	»	12	»
»	Մանուէլ Մանուէլեան	»	4	»
»	Պօղոս Մատաննեան	»	12	»
»	Պետրոս Պաքրճեան	»	6	»
Տն.	Տաւտու Սիվրիսարեան	»	10	»
Պրն.	Արշակ Գ. Դաւիթեան	Բակլայ	5	»
»	» » »	Սիսեռ	5	»
»	Աբրամ Համբարձումեան	Թուղ	4	»
»	Գարեգին Դաւիթեան	Ձաւիչ	8	»
»	Ջարհ Շնորհաւորեան	Թաչին հելվա	1	»

Օր·	Զարուհի Վարպետեան	Գատափի	1	»
Տն·	Էլիզ Ն· Գասպարեան	Ձամիչ	4 1/2	»
»	» » »	Թուզ	4 1/2	»
»	Իսկուհի Ադամճանեան	Ձամիչ	2	»
»	Կատինա Մէլիքեան	Պղպուր	4	»
»	Կիւլա Շիշմանեան	Թուզ	2	»
»	Հռիփսիմէ Դ· Շէրիմճեան	Բիտեով հելվա	18	հատ
»	Մարթա Համբարձումեան	Լօխմա	3	օխայ
Պրն·	Մարկոս Մամուրեան	Թուզ	4	»
»	Միրզա Մսերեան	Պատէմ պէօրէկ	1/2	»
Տն·	Մարգրիտ Պերկամալեան	Լօխմա	3	»
»	» »	Անուշեղէն	1	»
Տէր·	Ցարութիւն Եղվարդեան	Ձամիչ	20	»
Տն·	Շուշան Ճ· Էլմասեան	»	8	»
»	» »	Թուզ	4	»
»	» »	Թային հելվա	1	»
»	Ոմն	Ղաթմէր	25	հատ
»	Ոսկի Առաքէլեան	Բէօրէկ	2	օխայ
»	Ոմն	Ձամիչ	5	»
Պրն·	Սահակեան Քուլուճեան	Ղաթմէր	30	հատ
Տն·	Վարդուհի Ալթունեան	Ռուճի	3	օխայ
»	Վարդուհի Զինկիրեան	Ղաթմէր		
»	» »	Կարկանդակ		
»	» »	Ձիթապտուղ		
»	» »	Թարխանա		
»	» »	Լուբեա		
»	Տուտու Աղազարեան	Ձիթապտուղ	5	»
»	» »	Անուշեղէն	1	»
»	Վարդուհի Ալթունեան	Մկրատ	1	հատ
	Ապգ	Ածուխ	150	օխայ
	»	Վերմակ	5	հատ
Տն·	Բերսաբէ Սիմբիսարեան	Թաշկինակ	24	»
Օր·	Եւքարիս Սըվազեան	Մեծ պնակ	1	»
»	Զարուհի Վարպետեան	Պնակ	12	»
»	» »	Պահարան	1	»
»	» »	Ամերիքան	1	թօմ
Պրն·	Զարեհ Խիւլիքճեան	Ձիթ	2	թօմ
»	» Պերկամալեան	Մատիտ	12	հատ

Օր·	Էլիզ Ալազարեան	Մատիտ	8	հատ
Օր·	Էֆտիկ Մելիքեան	Գլխի փիլէ	13	»
»	» »	Թուղթ	100	թերթ
Տն·	Էլիզ Զելիքեան	Ամբար	1	հատ
Օր·	Թագուհի Յովսէփեան	Կօշիկ	6	զոյգ
Տն·	Թագուհի Պաքրճեան	Կօշիկ	6	»
»	Իսկուհի Տ· Գասպարեան	»	1	»
»	» » »	Հագուստ	1	ձեռք
Պրն·	կարապետ Պալասպանեան	Տառեր	4	օրին·
Տն·	Հռիփս· Պաքրճեան	Ամերիքան	1	թօվ
»	Մարիամ Թևեան	»	1	»
»	» »	Ամբար	1	հատ
»	» »	Շերեփ	2	հատ
»	» »	Պտուկ	1	»
»	» »	Սեղանի ծածկոց	1	»
»	» »	Խաստա ձեռագործ	10	կանգ·
Պրն·	Մխիթար Ագնաւորեան	Ամբար	1	հատ
»	Մատթէոս Մամուրեան	Դասագիրք Հ· և Գ·	17	»
»	Մերկեր Մերկերեան	Ամերիքան	1	թօվ
Տն·	Մարիցա Ճեքինա	Զիթ	30	կանգ·
»	Նեկտար Սիվրիսարեան	»	2	թօվ
»	» »	Ամերիքան	15	կանգ·
»	» »	Դպալ	12	հատ
»	» »	Պատառաքաղ	12	հատ
»	» »	Դանակ	12	»
	Ոմն	Կօշիկ	10	զոյգ
	»	»	1	»
Տն·	Իսկուհի Թագուորեան	Զիթ	1	թօվ
»	» »	»	9	կանգ·
Պրն·	Սահակ Աւետիքեան	Զուխայ	2	թօվ
»	Ստեփան Գուլումճեան	Ամերիքան	1	»
Տն·	Վարդուհի Զիլինկիրեան	Անձեռոց, ձեռք սրբ	24	հատ
»	» »	Գլխարկ	12	»
»	» »	Բաժակ	6	»
»	» »	Բաժակակալ	1	»

ԳՐԱՍԵՂԱՆՆԵՐՈՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆԴԱՆԱԿՈՒԱԾ ՀԵՏԵՒԵԱԼՆԵՐԸ

Պրն.	Պօղոս Կոստանեան	1	Ոսկի	Օսմն.
»	Մեսրոպ Սիմոնեան	1	»	»
»	Արմենակ Կամսարական	½	»	»
»	Գէորգ Ճէլէպեան	1	Մէճիտ	
»	Մուրատ Պերկամալեան	1	»	
»	Միհրան Բարաղեան	1	»	
»	Միսաք Մօրուքեան	1	»	
»	Յակոբ Էլմասեան	1	»	
»	Յակոբ Համբարձումեան	1	»	
»	Յովսէփ Ճերմակեան	1	»	
»	Յովհաննէս Մրքէլեան	1	»	
»	Կարապետ Մրքէլեան	1	»	
»	Ռուբէն Աղազարեան	1	»	
»	Վահան Մարուքեան	1	»	

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ԶՈՓԱՏՈՓ-ՕՐԲԱՔՆՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹԵՍՆ

1893 Ապրիլ 1 — 1894 Մարտ 31

ՄՈՒՏՔ	Մէճիտ 33 էն		ԵԼՔ	Մէճիտ 33 էն	
Դրամագլուխ	28248		Ս. Սիվրիսարեանի քով պատրաստ դրամ	18536	
Բաժնեգին և նուէրներ	11770	75	Կ. Յակոբեանի քով	9712	
Վիճակահանութենէ	2376	25	Տան վարձք	3478	50
Մախսուած նիւթերէ	64	25	Պաշտօնէից ամսականներ	3455	50
Ընթերցատան Տնօրէն խորհրդէն իբր կարասեաց վարձապին	330		Կարասեաց չինութեան	311	
Վիճակահանութենէ գոյացած դրամի տոկոս	153	50	Որբուհեաց հանդերձեղինաց	1505	
			» դրական պիտոյից	195	
			Տան և Որբուհեաց մաքրութեան	160	
			Ածուխ և խոհանոցի պիտոյք	224	75
			Կարասեաց փոխադրութեան	77	75
			Տպագրական ծախք և կնիքի	264	
			Թղթատան և այլ ծախքեր	17	75
			Պատրաստ դրամ	4485	50
	42922	75		42922	75

ՄԵԾ ՆՈՒԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Դ. եւ Լ. ՃԷՐԻՏՃԵԱՆ

Հայոց Ձեռ Ըսաղ

Մեր վաճառատան մէջ կը գտնուի անոյշին ամէն տեսակ պարէն, ինչպէս՝ ալիւր, բրինձ, արդար եղ, շաքար, խոհուէ, ձէթ, մաքարօնի, ապուրի համար խմորեղէններ, պանիր, պիսքուիներ, անուշեղէններ, դինի, քօնեակ, և այլն, և այլն և ամէն ինչ որոց պէտք զգալի է ամէն տան և մանաւանդ ամառանոցի մէջ։

Խիստ ժամն և ամէն մրցումէ արհամարհող գիներ։

ՀԱՅԿ ԶԱՆԻԿԵԱՆ

ՄԹԵՐԱՆՈՑ ՎԵՐՄԱԿՆԵՐՈՒ

Գալէ – Իւէ, Թիւ– 4, 12 և 14

Կը ծախուին զանազան վերմակներ, անկողնի և բազմոցի համար թէ՛ բամպակէ և թէ՛ յարդէ բարձեր, Փոթերէր և ուրիշներ։ Նաև Ցեզայրին և եգիպտական ամէն տեսակ բամպակ թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ։

Ապագրանքի վրայ մեծ հոգածութեամբ կը պատրաստուին զարդարուն վերմակներ Տարասեկան անկողնի համար։

Գաւառներէ եկած յանձնարարութիւնք փութով ու ճշտութեամբ կը կատարուին։

ՇԱՏ ՁԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐ

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՈՏՆԱՄԱՆՆԵՐ

Զանազան կաշիներէ, ինչպէս՝ գէչէ գերէ, Թեըրիւ, Հէյեց, ըռոզըն, սափրի և ամառուան համար գուշաւոր կաշիներ։

Ոտնամանները գինը պիտի որոշուի հագնողին ոտքին թուշի համեմատ։ Ասկա ՆԱՐՈՒՆԹԻԻՆ մը որմէ օգտուիլ կը խրատենք մեր պատ. Ցաճախորդներուն և Արդ. Հասարակութեան, որովհետև՝ այս պրութեամբ՝

0/0 10-15 ՆՈՒԱՋ պիտի վճարուի։

ԳՆԵՑՈՒՑԱԿ

Թիւ– 40 եւ Քոլ– 48 — Մէտրօ 33 եւ

Կօշիկ Ն–ոլէ կրկնանկրքան	Թիւը	գրշ. 7
Կօշիկ Բիւ– »	»	» 6
Պօթ ֆոթպոլ և ֆութոյ	»	» 3 25
Բօթին ու սաղնգաւոր (մանթարլը) »	»	2 75
Պուքեզ ու » »	»	» 2 75
կէս պուքեզ և կէս պօթ	»	» 2 50
Աքարբին	»	» 2 37 1/2
Բօթին ֆուլ	»	» 3 75

Միանգրամը վերի ցուցակին գիներուն 1/4 մէճիտ պակաս։

Ոտնամանները ի Տարկին 24 ժամէ կը յանձնուին,

Աժնութիւն, գիմացկունութիւն և ճաշակաւոր ձեւաւորութիւն։

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ ԿԱՆԽԻԿ

Այլ ներքէ ենթեցոյցն Ձեռ տրան մօտ, Թիւ– 47

ԱՄԱՍ ՊՕՂՈՍ Կ. ՕՀԱՆԵԱՆ



ՄԹՐՆՅ· ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐՈՒ

Ն. Ժ. ԲԱՔԱՐԱՔԻ ԵՒ ԸՆԿ·

Ծրւց· Ք·Ա 91 — Շ։Ե։ՔՈՑ 34

Գ.ՆԱԲ, ՓԵՓԷ–ՍԷՐԷ 32/34

Մարդ կրնայ ամեն տեսակ կարի մեքենաներու տէր լլլել, ՄԻՄԻԱՅՆ չարժէ ատկէ 1/2 մէջէտ վճարելով։

Կօշկակարներու, դերձակներու և ճերմակեղէնի կարուհիներու համար՝ կարի մեքենաներու նոր ախՂԷՔԸ ամենէ տոկուն, ամենէ արագ, ամենէ դիւրին և առանց ձայնի է։

Մեր վաճառատանէն ծախուած ամէն մեքենայ ԵՐԱՇԽԱՐԵԱԼ է։

Մեր ամէն յաճախորդներուն ՁՐի դասատուութիւնն և մեքենաներու նորոգութիւնն։

Ամէն տեսակ մեքենաներու նորոգութիւն։

Աժան, դերձան, իւղ չափազանց դներով։

Համոզուելու համար ԱՆԳԱՄ ՄԸ ՄԻԱՅՆ այցելել պէտք է։

ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԻՋՄԻՐի համար — Արժեքին կէսը կանխիկ և միւս կէսը երեք ամիսէն։

ԻՋՄԻՐԼ ԴՈՒՐՍ — կանխիկ։

Ամեն անօնք կ'փափաքին հաստատուն և ճաշակաւոր ու միանգամայն խիստ չափաւոր գիներով՝ կազմեալ գրքեր ունենալ թող դիմեն, 1857է իվեր հաստատեալ, ԵՎԱՆԿԷԼԻՔՕՆ Յունաց պատրոցին անցքին մէջ թիւ 8

ատե. **ԱՓՈՆԱՄ ԱՆԿԷԼԻՏՍՈՒ**

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

ՋԱՐԵՀ ՇՆՈՐՀԱԻՈՐ

Հայոց Ֆառ, Բէյնուկ Ճաղպէ

Ամեն տեսակ դեղերու մեծ քանակով պատրաստութիւն

Ջափաւոր դիներ

Գատանելիք եկած հիւանդներու ամեն դիւրութիւն կը տրուի, իրենց հիւանդութեանց տեսակին յարմար բժիշկներ կը ներկայացուին և անոնց պէտք եղած դեղերը մինչև իսկ դատաւոնները կը պրկուին։

36350 ՈՍԿԻՆՈՑ
ՀՍԿԱՅԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՍԱՆԴԻՍ

ԲՕԼԷՄՈՍԻ

(Ο ΠΟΛΕΜΟΣ)

Հրդեհեալ մթերանոցներէն ազատուած ապրանքներու

Պէտք ունեցողք ու չունեցողք թող վաճառման դնել այս ապրանքներէն ոյք անհատատալի կերպիւ աժան դիներով կը վաճառուին։

Հրդեհէն ազատուած և այլեայլ կարեւոր ղեզչերով և ցոյց դրուած վաճառքներն հետեւեալներն են.

Դարակ՝ չքնաղեստաց, բրդե գործուածներու, վուաչներու եւ

Դարակ՝ մանր մունր ապրանքներու, ժանեակ, երիզ եւ

Դարակ՝ արանց, կանանց և տղայոց վերարկուակ կօշիկներու.

Դարակ՝ տպաժոյի, մուշլինի, ժապօնէի եւ

Դարակ՝ շապիկի և տոբատի վերարկուակ կտաւներու եւ

Դարակ՝ ճերմակեղինաց, խոտոյի, շղարշի, վարագոյրի եւ.

Բօլէմոսի մթերանոցներու այս զտրմանալի վաճառահանդէսը ի գործ պիտի դրուի նոյն տեղը՝ Պարմաք Գուխու փողոցին, ուր որ հրդեհն երեւան եկաւ։

Ժ. Մ. ԳՕՆՏՈՒԼԻՍ ԵՒ ԸՆԿ.

Յանձն.— վաճառատունք առաւօտեան ժամը 9 ին պիտի բացուին։

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՏԻՕԵԼԵՆԻՍ

(GRANDS MAGASINS DIOGENIS)

Պատիւ ունինք ծանուցանել քաղաքիս Պատ. Հասարակութեան Թէ ի վաճառ դրած ենք **ԱՄԵՆ** *տեսակ ապրանք* **ԽԻՍՏ ԱԺԱՆ** *գներով, այնքան աժան որ գնողներու* **ԱՆՀԱՒԱՏԱԼԻ** *պիտի երեւան։*

Ապրանքներու գիները այնքան կոտրելնուս պատճառը նոր գալիքներու տեղ պատրաստելու համար է։

Պատ. Հասարակութիւնը որքան շատակ այնքան չահաւոր պիտի ենէ։

ԱԺՆՈՒԹԻՒՆ

ՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հիմնեալ 1893 ին Ջիւռնիա։

Սոյն դպրոցին մէջ աղուց կ՚տրուի Հայաստանեան կրթութիւն օգտակար դիտութեանց վերաբերեալ։ Կ՚աւանդուին Գերմաներէն, Ֆրանսերէն և Անգլիերէն որ պարտաւորիչ են։

Դպրոցս կ՚ընդունի նաև դիշերօթիկներ։

Դպրոցական տարին կ՚սկսի 1/13 Սեպտեմբերին։

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար պարտ է դիմել գերմաներէն դպրոցին տնօրէնին։

Պուռճխդէյտ Փոլց, Թիւ- 37

Ե՛ն· Մէց ԷՐՄԻԼԻՕ։

ԲԱՌԱՐԱՆ ԱՆԴԼԻԵՐԷՆԷ Ի ՀԱՅ *յօրինեց վ· Ե· ՅԱԿՈԲԵԱՆ*, Ամբողջ գործը փոխանակ 35ի որ խոստացուած էր՝ 45-47 թերթ պիտի լինի։ Բաժանորդագինն է պարզ կազմ 30 դրշ· լաթ· 35, կիսակաշի 40։ Օտար երկրաց համար 7 և 8 ֆր· լրանալէ յետոյ 40, 45 և 50 փոստին ծախքը գնողին վրայ լինելով։ Փափաքողք պարտին դիմել հրատարակչին, Ջ· Թորոսեանի Պօլիս, Պահճէ-Գաբա, նոր բոստին դէմ, թիւ 4, ուր է մնակ-կեդրոնատեղին։ Ա· Թերթն ձրի իբր նմուշ կը տրուի։ Հրատարակուած է 38ը թերթն։ Բաժանորդագրութիւնն ի մնալ կը փակուի երբ 40ը թերթը հրատարակուի։

ՅԻՇԱՏԱԿԱՑ ՓԱՂԻԿՆԵՐ· Փունջ առաջին· ՈՈՒՐՔՆ ՈՐԲԷՐԵԱՆ, կեդրոնատեղի Յակոբ էֆ· Իպրահեան գրավաճառ և Չրաչճառ կ· Պօլիս կէտիկ — փաշայ, գին 5 դահեկան· գաւառներու յանձնարարութեանց փոխան նամակագրողք ևս կընդունուին, փունջ երկրորդ ընդ հուպ հրատարակուի։

Ա· Կ· ՍԷՐԻԼԻՄԵԱՆ· Մարդ բրլալու միջոցը կամ կեանքի մէջ յաջողելու ճամբան։ — կեդրոնատեղի Ց· Մատթէոսեան Թղթավաճառատուն, կ· Պօլիս· Գին ընտիր քառթանէ կազմ 8 դրշ· ոսկեզօծ և փառաւոր լաթակազմ 12 1/2 դրուշ։

Լեւոն Տօլմաճի կրէցկեռաց, Սօճատ Թարգմ· ԽՈՐԷՆ Ծ· ՎԻՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԷ· Տպագր· Գ· Պազտասլեան կ· Պօլիս· Գին 5 դրուշ։

Համառօտ գրացուցակ· Պ· Պալինց դրատան· Ցինճանճըլար Նօքուշու Թիւ 20 կ· Պօլիս· 1894·

Անանք որ կ՚վաճառքին իրենց երկերն թերթիս մէջ ծանուցցեալ տեսանել, կ՚խնդրուին որ երկերնիս արձնակ խմբագրատեղիս հասցնեն։

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Ս ՄԱՄՈՒՐԵԱՆԻ

	Դահեկան	արժ.
Ջաւախկ (Վօմիէր)	5	
Ֆիլտին (ապառաժ)		
Միքրօ-Մ՚ելաս, ժան և Քօլէն, Ճերմակ ու Սև (Վօմիէր)	4	
Վերմէր (Կէօմէզ)	8	
Մ՚ենատաանի ապօրին (Տ. Պոման)	3	
Սէվիլլի սափրիչը (Պոմարշէ)	3	
Պալանիք Բարիզի (Էօժէն Սիւ) 8 հատոր	96	50
Հալալ ու մկկ պիլեռներ 6 »	74	50
Երիք Հրացանակիրք (Ա. Տիւմա) 3 »	36	
Քառն ատրի եաք » » 4 »	46	50
Պրաժ֊ըն պերիոմ » » 12 »	115	
Ամօրի » »	16	50
Իվանօֆ (Վ. Ուքօմ) 3 հատոր	29	
Անիծեալն (*** Արթայ) 4 հատոր	38	25
Ամուրիի մը երազները (Ին. Մարմէլ)	6	50
Աչխարհի չրջանն ութսուն օրուան մէջ (Ժ. Վէռն)	12	75
Ծորհրդաւոր կղզի (Ժ. Վէռն) 3 հատոր	28	
Մանկտիք (Շանթիէօրի)	9	25
Ինպերիականի մը Յիչատակը	8	
Համառօտ պատմ. Բնական գիտութեան (Ա. Պըքլէյ)	10	
Մանր վէպեր ու դասեր տղոց համար (ապառաժ)		
Բանալի Հայերէն չարադրութեան Բ. պէտ	3	
Գիտելիք ու պարտիք տղոց Ե. պէտ	5	
Ընդհանուր պատմութիւն համառօտ Մաս Ա.	5	
» » » » Բ.		
» » » Հատոր Բ.		
Առաջին Ընթերցարան	2	
Երկրորդ ընթերցարան Ե. պէտ	2	50
Տունէն դուրս Թագերախաղ	5	
Իրաւանութիւն Բ. պէտ	5	
Առողջապահութիւն տղոցանց համար	5	
Ակնեցեան Ազգ 23 տարուան (1871–1893)	1242	
Սարտան Նոգո (Ոնէ)	5	
Բերուզա՛ (Խոսվէն)	5	
Առանին Տնտեսութիւն	8	

Bibl. Nationale de la Revue arménienne HANTESS